

# Սյունյաց երկիր

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ.  
№ 5 (495)  
www.syuniacyerkir.am

**Հեղափոխությունները  
պայթյուն են, ավերիչ  
ուժ ունեն, կորուստներ  
են...**

Հրանտ Մաթեոսյան

## Իմ Ռոբերտ Ամիրխանյանը

Նախախնամության կամոք անցյալ դարի 70-ական թվականներին ծանոթացել եմ մանետրո Ռոբերտ Ամիրխանյանի հետ և արդեն մի քանի տասնյակ տարի է՝ ընտանիքիս, զավակներիս հետ վայելում ենք նրա շնայլ ընկերությունն ու բարեկամությունը: Այդ տարիներին բազմաթիվ հանդիպումների ընթացքում ինձ համար բացահայտել եմ երաժշտությունից «դուրս», երաժշտությունից «անդին» մեծ արվեստագետից ոչ պակաս մեծամուն անհատին: Այս մասին իմ փոքր շրջապատում անթաքույց հպարտությամբ պատմել ու պատմում եմ մի այնպիսի ոգեւորությամբ, կարծես նրա այդ արժանիքների մեջ ես էլ ինչ-որ ներդրում ունեմ:

Ի վերջո համարձակվում եմ այս մասին մտորումներս, մեր հանդիպումներից հիշողությանս մեջ մնացած առավել հետաքրքիր դրվագները լրագրային մանրապատումների տեսքով ներկայացնել «Սյունյաց երկիր» թերթի ընթերցողներին:

Գորիսում լինելիս երբեմն հյուրընկալվում էր մեր երկու սենյականոց համեստ բնակարանում: Այդպիսի մի օր՝ օգոստոս ամսին, առավոտյան շատ վաղ արթնացա եւ նրա մահճակալը դատարկ տեսա: Գիտեի, որ վաղ արթնանալու սովորություն ունի: Սովորաբար իջնում էր բակ եւ այնտեղ գտնվող մշտափայտ աղբյուրի սառը ջրով լվացվում: Աղբյուրը երեւում էր պատշգամբից: Այնտեղ չէր: Արագ հագնվեցի եւ իջա: Մեր քաղաքում մի այլ սիրած վայր էլ ուներ. գնում էր դեպի Գորիս գյուղին մատչելի քարափը եւ այնտեղից երկար ժամանակ դիտում մուկնիս տեղացիներիս համար երբեք սովորական չդարձող հրաշալի տեսարանը: Չէի սխալվել: Անցել էր ծորապնակի գտնվող բացօթյա սրճարանի տարածք եւ մի տարեց կնոջ հետ կանգնած զրուցում էր: Քիչ ուշացնում էլ ինքն նկատեց եւ անցնելով սրճարանը փողոցից բաժանող ցածր ցանկապատի վրայով՝ շարժվեց դեպի ինձ: Չգիտեմ ինչու, հարցրեցի՝ ի՞նչ էիք զրուցում: Ասաց՝ չէինք զրուցում, կռվում էինք: Ես հարցական նայեցի նրան: Շարունակեց.

- Ես անցել էի սրճարանի տարածք, երբ նա մոտեցավ եւ հայտարարեց, որ ինքն այդ սրճարանի պահակն ու հավաքարարն է, եւ որ ես պետք է «փաստափուսես հավաքեմ»: Ես էլ ասացի, որ սրճարանն արդեն իմն է, գնել եմ: Ինքն էլ զարմացավ, թե ինչու իրեն այդ մասին չէն ասել: Հետո եկար դու եւ խանգարեցիր: Երբ մոտեցանք մեր տանը, ասաց.

- Արի թեզ մի լավ բան ցույց տամ:

Բազմաբնակարան շենքը, որտեղ ես ապրում էի, երկու հարկի բարձրությամբ կամարով բաժանվում էր հավասար մասերի: Նա ինձ տարավ այդ կամարի տակ եւ զխոսվ դեպի վերեւ ցույց տվեց: Առաստաղին մոտ, պատի վրա կարմիր ներկով խոշոր գլխատառերով գրված էր «Երջանկություն եմ ուզում»: Ոչինչ չասացի: Երբ շարժվեցինք, ավելացրեց.

- Միայն սիրահարված մարդը կարող է մնան բան գրել:

Ինչ-որ ձեռով արծազանքելու համար ասացի՝ սենտիմենտալ է: Ասածս հավանաբար նրան դուր չէկավ: Բավականին ժամանակ լռելուց հետո չգիտեմ՝ հարցրե՞ց, թե՞ բարձրաձայն մտածեց.

Սենտիմենտալ լինելն այդքան վա՛տ բան է: Բա առանց սենտիմենտի ինչպե՞ս



## Հեղափոխական հանելուկ Քաջարանում. ինչպե՞ս եղավ, որ մեկ տարում 9 մլրդ կամ 18 մլրդ հարկ վճարող ընկերությունը 2018-ին վճարեց 41 մլրդ դրամ

Պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է հանրապետության 1000 խոշոր հարկ վճարողների ցուցակը եւ նրանց կողմից 2018 թ. հարկային տարվա ընթացքում վճարած հարկերի չափը:

«Ջանգեղուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը, ըստ այդ փաստաթղթի, վճարել է 41,047 մլրդ դրամ:

Հրաշալի ցուցանիշ է, բայց...  
Նույն ընկերությունը 2017-ին վճարել է 18,670 մլրդ դրամ:

Նույն ընկերությունը 2016-ին վճարել է 9,121 մլրդ դրամ:

Եվ պարզագույն հարց է ծագում այդ թվերը համարելիս՝ ինչպե՞ս եղավ, որ մեկ տարում ընկերությունը վճարեց 41 մլրդ դրամ:

Հարցը տեսականորեն կարող է ունենալ մի քանի պատճառաբանություն:

Օրինակ, հանքաքարի արդյունահանման ծավալների կտրուկ աճ 2018-ին կամ գունավոր մետաղների գների շեշտակի բարձրացում 2018-ին կամ...

Արձանագրեմք սակայն, որ 2018-ին հանքաքարի արդյունահանման ծավալների աճ Քաջարանում չի եղել:

Հանքաքարի արդյունահանման ծավալների աճ այնտեղ եղել է (ե՛ւ օրինական ճանապարհով, ե՛ւ ոչ օրինական ճանապարհով) 2014-ից սկսած:

Այսպես՝ դեռևս 2007-ին եր ԶՊՄԿ-ին տրվել տարեկան մինչև 12,5 մլն տոննա հանքաքարի արդյունահանման իրավունք:

էջ 4

## Հանճարեղ պոեթի մեկուկես դարը

2019-ին լրանում է հայոց երկու մեծերի՝ Գրիգոր Թումանյանի եւ Կոմիտասի ծննդյան 150-ամյակը: Մեծ լռեցու հորեյանը փետրվարի 19-ին էր: Իր մեծությամբ, ստեղծագործությունների խորությամբ, գեղարվեստական վիթխարի ընդհանրացումներով՝ եւ բազմաժանրությամբ վաղուց դուրս է եկել իր ապրած ու ստեղծագործած պատմական ժամանակների շրջանակներից: Թումանյանն ավելի, քան մեկ ուրիշը, նվաճել է հայ ժողովրդի ազգային մեծ գրող, «Ամենայն հայոց բանաստեղծ» կոչվելու իրավունքը:

Թումանյանին հայ Պառնասի անդաստանում հստակ է տեղորոշել Եղիշե Չարենցը՝ նրան համարելով մեր նոր քերթության Արատը:

«Կա Մեծարեց, կա Տերյան եւ բազում ուրիշ պոետներ կան,  
Բայց՝ Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:

Մի այլ բանաստեղծության մեջ մեծ լռեցուն համեմատում է համաշխարհային պոե-

զիայի մեծերի հետ:

Այս հմուտ, հանճարեղ լռեցին Գրեթե հետ մի օր՝ հավասար նստել է քեֆի...  
«Թումանյանը վարպետ է ամեն կողմով, մեծ գեղարվեստագետ եւ ժողովրդական հոգու իմաստուն եւ վսեմ թարգման: Նա կանգնած է իր հստակ ճանապարհի վրա, որ լի է գեղարվեստական հրաշալիքներով»,- ... Սա էլ նրա ժամանակակցի ու հայ քնարերգության մյուս մեծի՝ Վահան Տերյանի գնահատականն է: Ի դեպ, գեղարվեստական այդ հրաշալիքներն արարել է գրական տարբեր ժանրերով բանաստեղծություն, պոեմ, լեզենդ, բալլադ, քառյակ, հեքիաթ, պատմվածք, հրապարակախոսական հոդված, գրական եւ թարգմանական փոխադրություններ եւ այլն: Նրա «Անուշ» պոեմը Վալերի Բրյուսովը համարել է «հայ կյանքի համրագիտարան»:

Այս ամենով հանդերձ՝ դյուրին չի եղել պոետի ուղին, եղել են նաեւ չարախոսներ, բանաստեղծը թանկ ժամանակ է կորցրել



էջ 8

էջ 2

# Իմ Ռոբերտ Ամիրխանյանը

Էջ 1 Կստեղծվի պոեզիան, մեղեդին:


Սիրելի Ռոբերտ, ներքի, եթե ակամայից վիրավորել եմ քո խողորությունը:

Վաղուց այդ շենքում չեմ ապրում, բայց քաղաք իջնելուց անպայման անցնում եմ այդ կամարի տակով: Քո գտածոն դեռ այնտեղ է՝ «Երջանկություն եմ ուզում»...

1978 թվականին «Մոսֆիլմը» վավերագրական ֆիլմ էր նկարահանում մաեստրո Ռոբերտ Ամիրխանյանի եւ գեղանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի մասին: Ֆիլմի ռեժիսորը Ռոբերտին նվիրված նկարահանումների համար փնտրում էր մի տարածք, որը պետք է լիներ զուտ հայկական եւ միաժամանակ խիստ կուսակցական տպավորություն թողներ հանդիսատեսի վրա: Ռոբերտը այդպիսին առաջարկեցի իմ հայրենի Խանածախ գյուղի մոտակայքում գտնվող «Անապատի ծորը»: Այդտեղ գանգեզուրյան բրգածե սրագագաթ ժայռերը, տասնյակ տոննանոց քարե գլխարկով հարյուրավոր սնկերը կարող էին հենց այդպիսի տպավորություն ստեղծել: Իր գեղեցկությամբ մեր անապատն ամերիկյան հայտնի Մակենայի կիրճին կարող է զիջել թերեւս միայն չափսերով:

Մայիսի կեսերին ֆիլմի ստեղծագործական խմբի հետ մեկնում ենք այնտեղ: Կիրճից մոտ 2-3 կմ հեռավորության վրա իջնում ենք: Ճանապարհի մնացած մասն անցնում ենք ոտքով: Հասնելով կիրճ իջնող արահետին՝ կանգնում ենք լուրջ խնդրի առջև: Պարզվում է, որ խմբի առանցքային անդամներից մեկը՝ մի մարմնեղ կին, սարսափի հասնող վախ ունի բարձրության նկատմամբ: Հետ դառնալ՝ նշանակում է կորցնել ամբողջ օրը: Առաջին մեկ-երկու քայլից հետո նա ուղղակի փլվեց: Մեկը խորհուրդ տվեց փակել աչքերը, բայց այդ խորհրդի կարիքը չկար. նա վաղուց էր դա արել եւ հավանաբար բացելու էր կիրճի հատակին հասնելուց հետո: Ինչպես, խմբի երիտասարդ անդամներից երկուսը մտան նրա թևերի տակ, եւ սկսեցինք վայրէջք: Ես եւ Ռոբերտն օպերատորներից մեկի հետ առաջացանք: Մոտ կես ժամ անց կիրճի հատակով հոսող առվակի մոտ էինք: Մեր լեռնային ավելի շուտ կարող էր տեղ հասնել, բայց օպերատորը ինքնաբերաբար նաեւ նկարահանումներ էր կատարում: Չսպասելով խմբի մնացած անդամներին, մենք սկսեցինք բարձրանալ կիրճն ի վեր: Յուրաքանչյուր 10-15 քայլից հետո գեղեցկությամբ նախորդին գերազանցող նոր տեսարան էր բացվում, այնպես որ օպերատորն աշխատում էր «քափ ու քրտինք» մեջ:

Մոտենում էր ժամը 12-ը, բայց արեւը, որ մեր թիկունքից էր, նոր-նոր էր հավում ժայռերի արանքներում մատողաշ կանաչով պատված թեթևություններին, որոնցից մեկի վրա միայն իրեն հայտնի կածանով բարձրացել եւ արթնում էր ոչխարի հոտը: Չգիտեմ ինչու, Ռոբերտը հանկարծ բարձր ծայր հանեց, գոռաց: Նույն ակնթարթին հոտի բոլոր կենդանիները, առանց բացառության, բարձրացրին գլուխները եւ թեքվեցին դեպի ծայրը: Մի քանի հարյուր զույգ աչքեր անդրադարձրին արելի լույսը եւ մնացին քարացած: Հսկայական լուսանկարի տպավորություն ստեղծվեց: Օպերատորն ափսոսաց, որ չհասցրեց ֆիքսել այդ հրաշալի պատկերը: Ես հանգստացրեցի նրան եւ հորդորեցի պատրաստ լինել ու հետևել իմ ազդանշանին՝ չնայած համոզված չէի իմ ձեռնարկման հաջողությանը: Նա թերահավատորեն, բայց այնուամենայնիվ նկարահանող սարքն ուղղեց դեպի ոչխարի հոտը եւ աչքի պոչով սկսեց հետևել ինձ: Մեկ-երկու րոպեից ոչխարի հոտը «վերադարձավ» ընդհատված գործին: Ես նշան արեցի Ռոբերտին եւ նա նորից գոռաց: Ոչխարները նորից բարձրացրեցին գլուխները: Օպերատորը, առանց սարքն անջատելու, այն դանդաղ պտտեց եւ Ռոբերտին էլ առավ կարդի մեջ: Գործն արված էր: Եվ չնայած դրան, այս խաղն այնքան էր դուր եկել Ռոբերտին, որ նա 3-4 րոպե մեկ կրկնում էր այն: Ոչխարը՝ ոչխար, բայց դե շուտով նրանք էլ հարմարվեցին այդ ծայրին եւ այլեւս ուշադրություն չէին դարձնում: Օպերատորը հրճվում էր: Հայտարարեց, թե քիչ առաջ նկարահանեց իր կյանքի ամենահետաքրքիր կադրերը: Չգիտեմ ինչու ֆիլմի ռեժիսորը չէր բաժանել նրա այդ կարծիքը. ոչխարների կարողությունն էլ տեղ չէր գտել ֆիլմում:



տորը հրճվում էր: Հայտարարեց, թե քիչ առաջ նկարահանեց իր կյանքի ամենահետաքրքիր կադրերը: Չգիտեմ ինչու ֆիլմի ռեժիսորը չէր բաժանել նրա այդ կարծիքը. ոչխարների կարողությունն էլ տեղ չէր գտել ֆիլմում:

Վերադառնում ենք հիմնական խմբի մոտ: Այդտեղ միանգամայն այլ մթնոլորտ է: Բոլորն ընկճված ու հոգած տեսք ունեն: Ռոբերտի հետ նախ մոտեցանք բարձրությունից վախեցող կնոջը: Միայն այդ ժամանակ իմացա, որ ֆիլմի ռեժիսորն է: Ռոբերտը հայտնում է, որ հրաշալի կադրեր են նկարահանել, մոտ 35 րոպեի ժապավեն ունեն, իսկ ես էլ դիմելով խմբի մնացած անդամներին, իմ մեթոդներով եմ փորձում բարձրացնել նրանց տրամադրությունը: Նախ հայտնում եմ, որ գյուղ ոտքով չենք գնալու, ինչպես ստել էի մինչև վայրէջք սկսելը: Մեքենաները մեզ սպասելու են կիրճի լայնացող մասում, որը մեր գտնվելու վայրից ընդամենը 200 մետր է հեռու: Հենց այնտեղ էլ մեզ սպասում է նախաճաշի եւ ճաշի առատ սեղան: Վերջում էլ հարցնում՝ կրակի հոտը չե՞ք զգում: Խոսքերս սպասելիքներս արդարացրին: Նրանցից մեկը սրամտում է՝ կրակի հոտը զգացել ենք, խորովածի հոտը չենք զգում:

Խորովածի հոտն էլ կզգաք, հենց որ մեզ նկատեն:

Առվակի մոտով մի քանի կեռաման անցնելուց հետո կիրճը բավականին լայնանում է, արեւն առավել լավ է լուսավորում, երեսուն եմ մեզ սպասող մտերիմներս: Քիչ անց նրանք էլ մեզ են նկատում. այնտեղ փոքր իրարանցում է սկսվում: Եվս մեկ-երկու րոպե, եւ զգում ենք խորովածի ամուշ հոտը:

Լի երգերը, ինքն էլ ուներ հաջողված երգեր, իսկ թղթախաղի շատ ձեւերում հավասարը չունեք: Ծանոթացել էինք Ալսել Բակունցի տուն-թանգարանում, որի մշտական այցելուներից էր: Ճանաչելով հանդերձ, համաքաղաքացիներից շատերը կարծում էին, թե նա ավելի շատ բացասական վարք ու բարք ունի, քան հակառակը: Վկայում եմ, որ դա այդպես չէր: Երբ ծխում, ոգելից խմիչքներից կիրճնետրերով հեռու էր, իսկ, այ, լինումադ շատ էր սիրում: Մի անգամ նրան առաջարկեցինք լինումադի հետ քիչ զինի խառնել: Չկարողացանք համոզել: Գտնում էր, որ այդ դեպքում երկու ըմպելիքն էլ կկորցնեն իրենց համն ու հոտը: Երեւի ինքը ճիշտ էր: Համենայն դեպս նա այդպիսին էր երիտասարդության տարիներից:

Առիթ եղավ, եւ նա էլ ծանոթացավ Ռոբերտ Ամիրխանյանի հետ: Մաեստրոյի խնդրանքով երգեց. սկզբում Շառլ Ազնավուր, այնուհետեւ կատարեց նաեւ իր երգերից, կարողացաք ամատեղություններից: Անհամբերությամբ սպասում էինք, թե ինչ կասի մաեստրոն, սակայն նա իր կարծիքը յուրօրինակ ձեւով արտահայտեց: Որոշ ժամանակ լռելուց հետո անսպասելի հարցրեց.

- Կոլյա, կոնսերվատորիայում կսովորե՞ս: Մենք մեր ակամեջներին չէինք հավատում: Կոլյան, ով նույնիսկ չէր անցել երաժշտական դպրոցի կողքով, իսկ առանց երաժշտական կրթության դա ամենար էր, առաջարկ է ստանում դառնալ այն ժամանակի Խորհրդային Միության լավագույն կոնսերվատորիաներից մեկի սան:

Սովորեց միջեւ երրորդ կուրսի առաջին կիսամյակի վերջը, ու ինչպես անսպասելի ընդունվել էր, այնպես էլ անսպասելի անհետացավ: Հետո իմացանք, որ մեկնել է Ռուսաստան: Հետագայում մեր բազմաթիվ հանդիպումների ժամանակ մաեստրոն հաճախ էր հարցնում՝ ի՞նչ եղավ Կոլյան: Ամեն անգամ այս հարցը լսելուց ակամայից հիշել եմ Վանո Սիրադեղյանի հրաշալի պատմվածքի վերնագիրը՝ «Ափսոս էր տղան»:

Ասում են՝ Աստված մարդուն շնորհներ է տալիս, բայց դրանք տնօրինելու, պահպանելու, զարգացնելու իրավունքը վերապահում է միայն անհատին...  
...

Մեր առաջին հանդիպումներից մեկի ժամանակ ասացի, որ դասական երաժշտություն չեմ հասկանում: Նայեց ինձ: Այդպիսի բան չկա: Քո ասած այդ երաժշտությունը բոլոր շնչավորներն են զգում, նույնիսկ բույսերը: Եթե հնչելուց ցանկություն չի առաջանում անջատել, լռեցնել այն արձակող սարքը՝ ուրեմն հասկանում ես:

Մտավորականներից շատերը, երբ խոսք է լինում մեր երկրամասի՝ Սյունիքի մասին, ասում են՝ հեռու է... Նման կարծիք ունեցողներից շատերն էլ Արցախի տեղն իմացել են միայն ազատագրական շարժումից հետո: Ռոբերտ Ամիրխանյանն այն եզակի մտավորականներից է, որ մեր երկրամասերի հետ կապված է շատ վաղուց եւ կապված է ամուր թելերով: Դեռեւս խորհրդային տարիներից սկսած նրա ամենամյա համերգներն Արցախի եւ Ջանգեզուրի մեծ ու փոքր դահլիճներում սովորական էին: Նա հեղինակել է Սիսիանի, Գորիսի օրհներգերը: Բազմաթիվ մտերիմ ընկերներ ունի Կապանում, Մեղրիում, Գորիսում, Սիսիանում: Իսկ Արցախի եւ արցախցիների հետ, մի առանձին սիրով է կապված ու այդ սերը փոխադարձ է, որի վկայագիրը երեւանյան բնակարանի նրա աշխատասենյակի պատին է՝ արցախյան տատիկ-պապիկի հայտնի արձանի պատկերով ձեռագործ գորգի տեսքով եւ՝ «Ռոբերտ Ամիրխանյանին՝ Արցախից, 1983թ.» ընծայագրով: Հավանաբար այդ երկրամասերում նրա հաճախակի լինելն է պատճառը, որ երկրպագուներից շատերը կարծում են, թե մաեստրոն արմատներով Սյունիքից կամ էլ Արցախից է: Դե ինչ, թող այդպես կարծեն, դա մաեստրոյի համար հաճելի է, իսկ մեզ համար՝ պատիվ:

Անզխական մի հեքիաթ կա: Չար արքան հրաման է արձակում՝ իր թագավորությունից արտաքսել բոլոր սոխակներին եւ թույլ չտալ այլեւս վերադառնալ: Արքայական հրաման է, ո՞վ կհամարձակվեր ընդդիմանալ:

Օր ծերության արքան փոշմանում է իր արաբից: Նոր հրաման է արձակում՝ մեկ շաբաթվա մեջ գտնել, վերադարձնել թռչուններին:

Հրամանի հաջորդ օրը թագավորը գարթնում է սոխակի դայլալից: Չարմանքով հարցնում է երգի արքային՝ ինչպե՞ս իմացավ հրամանի մասին եւ հետո՞ ինչպե՞ս վարձա-հատույց լինի պատճառած տառապանքների համար: Թռչունը պատասխանում է, որ սրտի խոսքը սրտով են լսում, իսկ իրեն նորից լսելու նրա ցանկությունն արդեն ինքնին վարձա-հատույց լինել է:

Մեր ժողովուրդը Ռոբերտ Ամիրխանյանի երաժշտությունը սրտով է լսում: Մի պահ պատկերացրեք, թե չլինե՞ր նրա երաժշտությունը, չլինե՞ին նրա «Հայի աչքերը», չլինե՞ին հայրենիքին, սիրուն նվիրված նրա երգերը... Դա կլինե՞ր նույնը, թե չլինե՞ր Արարատը, Սեւանը, դա կնշանակե՞ր, որ հայ մարդու հոգեւոր կյանքը կիսատ է: Համենայն դեպս ես գորու չեմ նման բան պատկերացնել: Համոզված եմ, որ ինձ նմանները հազարներ են:

Ինձ իրավունք չեմ վերապահում որեւէ գնահատական տալ անհատի ձեւավորման, կայացման գործում երգ-երաժշտության դերակատարմանը, բայց գիտեմ, որ այն մարդուն դարձնում է ավելի բարի ու սիրող: Յուրաքանչյուր ոք դա կարող է ստուգել իր վրա: Իմաստունն ասում է . «Ակրիք երաժշտությամբ, նա երբեք չի լքի եւ ցավ չի պատճառի»:

Խոսելով Եդիշե Չարենցի պոեզիայի մասին, Վարպետն ասում է. «Հայ բաներով այդպիսի բանաստեղծություն չի գրված հայրենասիրության տեսակետից»:

Իսկ դուք գիտե՞ք «հայրենասիրության տեսակետից» հայ մարդու սրտի ու հոգու հետ խոսող առավել հզոր մի այլ երգ, քան «Երազ իմ երկիրն է»...

Հ. Մալյանի «Հայրիկ» կինոնկարում հնչում է այն: Մաեստրոն ասում է՝ այդ երգի վրա աշխատել եմ 25 տարի: Հիմա երգ, երաժշտություն գրելը հեշտացել, շատ է հեշտացել: Ով ասես գիրք ու երգ է գրում, հրատարակում, հրապարակում: Նորօրյա երգահանները 25 րոպեում հիք են ստեղծում, հետո «Գուշակիր մեղեդին»

# Ի՞նչ է կապարվում Սիսիանում տեղակայված Հարավային մաքսատուն-վարչությունում

Ղեկավար 2018 թվականի օգոստոսի 14-ին պաշտոնանկ արվեցին Հարավային մաքսատուն-վարչության պետ Աշոտ Մինասյանը, ապա Սեդրիկի մաքսային կետ-բաժնի պետ Սամվել Հայրապետյանը:

Օգոստոսի 24-ին «Սյունյաց երկիր» անդրադարձավ այդ զարգացումներին: «Պաշտոնակալություններ, որոնք, ըստ էության, պատճառաբանված չեն» վերտառությամբ հողվածում արձանագրվեց, որ ե՛ւ Աշոտ Մինասյանի, ե՛ւ Սամվել Հայրապետյանի պաշտոնակալության համար ՊԵԿ-ի նախագահը որեւէ հիմնավոր պատճառաբանություն չի բերել:

Այդ ամենից հինգ-վեց ամիս անց պաշտոնակալությունների նոր փոփոխվել է բարձրացել Հարավային մաքսատուն-վարչությունում:

Փետրվարի 15-ին «Սյունյաց երկիր» ստեղծագործական խումբը Սիսիանում հանդիպեց աշխատանքից ազատված մաքսավորներից մի քանի հոգու հետ: Ստորեւ՝ նրանց բացատրությունն առանց միջամտության:

## Արտակ վարդանյան- (աշխատում էր մաքսատան անվտանգության ծառայությունում)

Պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչությունից մարդ էր եկել, հերթով մարդկանց կանչում եւ հարցեր էին տալիս: Քրոջ տղայի կողմից մեքենա եւ նվեր ստացել ապրիլին, հենց մտա, հարցրին «Ինձ ֆինտիսի» տե՞րն ես, հետո էլ թե՛ բա այդ ավտոն ունեցողը կզա 90 հազար դրամով կաշխատի՞, ասի՛ նախ ավտոն այստեղ աշխատելով չենք առել, երկրորդն էլ այդ ինչն սուտ հազարի համար այլ պայմանները չկան, որ թողել ենք, գուտ եկել ենք այստեղ աշխատելու: Հարցրին՝ քանի՞ տարվա աշխատող եմ ասի՛ 17, ուրեմն բոլորի հետ շփվե՛լ ես: Գործի բերումով՝ այդ, պատասխանեցի:

Սինասյան Աշոտի հետ ո՞նց ես եղել, ասի՛ ընդամենը պետ-ենթակա հարաբերություններ էին:

Ասաց՝ որպես անձնավորություն ինչպե՞ս կբնութագրես նրան, ասի, որ այս խաղաղ պայմաններում նստած ես ինձ հետ զրուցում ես, ապա դա նաեւ Աշոտ Մինասյանի շնորհքն է, նկատի ունեի Սինասյանի մարտական հրամանատար եւ երկու պատերազմի մասնակից լինելը: Սա որոշ չափով զայրացրեց զրուցակցիս, թե՛ գեներալ Մանվելն էլ է կռվել:

Ասի՛ Աշոտ Մինասյանը միշտ իր անունը բարձր է պահել:

Գետո մեղադրանքներ ներկայացրեց. դուք ուղղորդված եք, երբ մեքենան մտնում է հիմնարկի տարածք, փոխադրման ամփոփագիրը վերցնում եք, փոխանցում զննման բաժնի պետ Աբունյանին, նա էլ տալիս է Սինասյան Աշոտին ենթարկվող բրոկերական կազմակերպությանը:

Ես նախ իրավունք չունեմ թուղթ տան տվյալ բրոկերին կամ մի այլ անձի, մենք պարտավոր ենք թուղթը վերցնել, գրանցել եւ հանձնել զննման բաժնին, նա էլ որոշում է՝ ում է ուղղված: Դա արդեն իրենց խնդիրն է:

Սեկ էլ ասացին, որ պիտի մեզ ինձորմացիա տաք, թե այստեղ ինչ է կատարվում: Ասի լսի՛ր ինչ ինձորմացիա պիտի տամ, եթե ղեկավար



ությունը որոշել է, որ մեր պահակակետից ոչ մի քայլ կողմ չպիտի գնանք, տեղաշարժվենք:

Եվ հետո, եթե լինում ենք վարչական շենքում, կաշառք տվող կամ վերցնող մեր ներկայությամբ է այդ ամենն անում, որ ես էլ դա նկատեմ:

Մեզ հետ պայմանագիր չկնքեցին, չգիտեմ դա՞ է խնդիրը, որ իրենց ինձորմացիա չենք տալիս, թե՛ տարիքս չի բավարարում կամ մի այլ բան, չգիտեմ:

## Գագիկ Փանյան (աշխատում էր անվտանգության ծառայությունում)

Նախ ծանուցագիր եմ ուղարկել կրճատման վերաբերյալ: Ասեմ, որ մենք պայմանագրային աշխատող ենք, նախորդ զգուշացրել էին, որ կարող է՝ կառուցվածքային փոփոխություններ լինեն, որի պատճառով հաստիքներ են կրճատվելու: Հունվարի 31-ին երեւանից ՊԵԿ-ի ներքին անվտանգության վարչության աշխատակիցն էր եկել, փետրվարի 1-ից մեզ ազատեցին աշխատանքից: Ասին՝ կաշառակերության դեմ չեք պայքարում. հետո էլ թե՛ բա են՝ ռեստորանները, կառույցները, որ շինել են, աշխատավարձով են արել (չասացին ումն է, բայց մենք հասկացանք): Ասի՛ երբ ընդունվեցի աշխատանքի, արդեն կառուցված են եղել:

Գետո ընդհանուր հարցեր տվեցին՝ նաեւ իմ ընտանիքի հետ կապված. իմացավ, որ երեխաներս ինստիտուտում են սովորում, թե՛ բա 100 հազար դրամ աշխատավարձով դու ո՞նց ես եւ ուսման վարձ տալիս, եւ երեխա պահում երեւանում: Ես էլ՝ գնանք բանկերը նայենք, թե ինչքան վարկեր եմ մուծում:

Մեզ ազատել են, մեր տեղը մարդ են ընդունել: Չասացին՝ ինչի մեջ ենք թերացել, մեր կրթությունը չի բավարարում, թե՛ աշխատանքային հմտությունները: Եթե թերացել ենք, ինչու որեւէ զգուշացում ու նկատողություն չի եղել: Ուղղակի իմանանք պատճառները: Լավ, էլ հինգ հոգու մեջ (նկատի ունի անվտանգության աշխատակիցներին) մեկը չկա՞ր խելքը զլխին, նորմալ աշխատող... Գոնե իմանալիք, թե մեզ աշխատանքից ազատելու պատճառն ինչ է:

## Հրայր Ալեքսանյան (աշխատում էր մաքսատան անվտանգության ծառայությունում)

ՊԵԿ-ի ներքին անվտանգության վարչությունից եկել էին մեզ մոտ, հետաքրքրվում էին, թե երբ մաքսագերծման փաստաթղթերը վերցնում ենք, ո՞նց ենք հանձնում դրանք: Ինձ առանձնապես շատ հարցեր չեն տվել, մեկ էլ թե՛ բա կինդ է՞լ է այստեղ աշխատում, ասել եմ՝ այդ: Սինասյանի հետ ի՞նչ կապի մեջ ես, ասացի՛ իրամանատարս է, մարտական ընկերս, հարցրեց, թե քանի՞ տարի եմ նրա հետ միասին աշխատում, պատասխանեցի՛ երեք: Բա կուզե՞ս մեզ հետ համագործակցել, ասի՛ ի՞նչ պիտի անեն, թե ինձորմացիա պիտի տաս մեզ, ասացի՛ դրսում եմ աշխատում, ներսի ինձորմացիան ո՞նց պիտի տամ, թե որ գանգեմ, ասեմ՝ պետի մոտ ո՞վ կա, կարողանալու ես ինձ ասես, պատասխանել եմ, որ դրսում եմ, ինչպես կարող եմ ասել: Այնուամենայնիվ, մի քանի հարցեր էլ տվեցին. բա դուք չպիտի իմանա՞ք՝ արդեն անցել եք ներքին անվտանգության, թե տվյալ փաստաթուղթը որ բրոկերի մոտ է գնում: Ասի՛ մեկ ամիս առաջ մեզ մոտ եղել է մեկ բրոկերական ծառայություն: Հիմա էլ՝ 9-ը հոգի, ընդհանուր առմամբ 14 հոգու կրճատել են:

## Հ.Գ. Ինքն ու կինն աշխատանքի էին ընդունվել, որ կարողանան երեխա որդեգրեն, 20 տարի է՝ ամուսնացած են, բայց երեխա չունեն: Ազատվելով աշխատանքից՝ զրկվեցին երեխա որդեգրելու հնարավորությունից եւ իրավունքից:

Երեւանից եկան, սկսեցին հարցեր տալ, նախ ցանկացան իմանալ, թե ինչպե՞ս եմ աշխատանքի ընդունվել: Պատասխանեցի, որ թափուր տեղ կար, ընդունվեցի: Յոթ ամիս եմ աշխատել: Հարցրին, ծանոթ եղե՞լ եմ Աշոտ Մինասյանին, ասի՛ ծանոթ չեմ եղել, պատահական իմացել եմ թափուր տեղի մասին: Բա ընդունվելիս փող ես տվե՞լ, ասի՛ փող ունենայի կծախսեի իմ

կարիքների համար, ինչո՞ւ եմ գալիս այստեղ պահակ աշխատելու: Հետաքրքրվեցին իմ ընտանեկան վիճակով, ունեմ երեք անչափահաս երեխա, պատճառն ի՞նչ է: Շատ եմ ուզում իմանալ, թե ինչո՞ւ ինձ ազատեցին աշխատանքից: Ստացվում է, որ մեզ հետ ամսարկայնորեն եմ վերաբերվել: Դիմում չեմ գրել, ծանուցում է եկել, ստորագրել եմ:

## Սամվել Գեորգյան (գանձումների համակարգման բաժնի նախկին պետ)

25 տարի է՝ մաքսատան եմ աշխատում, օպտիմալացման բոլոր տակ կրճատումներ են արել, Սինասյանի մոտիկներին եմ հիմնականում աշխատանքից ազատում, ինձ հետ Սինասյանի հետ կապված գրույց չի եղել, ուղղակի ինձ համարել են Սինասյանի մտերիմներից: Աշխատանքից ազատվածների փոխարեն նոր մարդ են ընդունել: Այսքանը կասես:

## Հովիկ Ավետիսյան (աշխատում էր մաքսատան անվտանգության ծառայությունում)

13 տարի է՝ աշխատում եմ հարավային մաքսատուն-վարչությունում: Փետրվարի 1-ից ազատվել եմ աշխատանքից: Այս ամենը կապված է Աշոտ Մինասյանի հետ, նոր պետն ասել է՝ 40 տարի մտերիմ հարաբերություններ ունես նրա հետ: Ինձ պարզապես ասաց՝ դու այլևս չես կարող աշխատել, ասի՛ ի՞նչ է եղել, ասաց մի չորս հոգու աշխատանքից պիտի ազատես, ասի՛ ախպեր ջան, ինչո՞ւ պիտի հանեն, պատճառն ի՞նչն է:

## (Հ. Ավետիսյանը մաքսատան անվտանգության ծառայության ղեկավարն էր):

Ներքին անվտանգության վարչության պետի տեղակալը, որ հունվարի 31-ին եկել էր, վերջինս ինձ կանչեց, նախ հետաքրքրվեց, թե Աշոտ Մինասյանի հետ ի՞նչ կապ ու-

նեմ, պատասխանեցի՛ դասընկերն եմ: Թե՛ ամսվա վերջին 20-25 հազար դրամ տամ, դարձիր ինձ համար ինձորմացիա բերողը: Ասի՛ ո՞նց, 59 տարի ճիշտ եմ ապրել, ո՞նց կարող եմ նման բան անել: Տեսավ, որ բան չի ստացվում, թե՛ ձեր բաժնում մարդ կա, որ կարող է անել: Ասի՛ թող անի, դա ինձ չի վերաբերում:

## Գետո Հարություն ՊԵԿ-ի նախագահ Դ. Անանյանին

Պարոն Անանյան Ի՞նչ է կատարվում Հարավային մաքսատուն-վարչությունում: Ըստ աշխատանքից ազատված մաքսատների՝ մարդիկ աշխատանքից ազատվել են առանց հիմնավորումների:

## Եթե կրճատում է, ապա ինչո՞ւ նրանց փոխարեն նոր մարդիկ են ընդունվել աշխատանքի:

Եթե նրանք ազատվել են միայն այն քանի համար, որ Աշոտ Մինասյանն է նրանց աշխատանքի ընդունել, ապա դա, մեղմ ասած, բարոյական մոտեցում չէ հատկապես մեր օրերում, երբ, զո՞նե խոսքով, առաջնորդվում ենք սիրո եւ համերաշխության դրոշմով:

## Ուղղակի սահմնկեցուցիչ է, երբ մարդկանց առաջարկում ենք մնալ աշխատանքում՝ պայմանով, որ զինվորագրվեն «ստուկաչուքային»:

Շատ ցավալի է, որ մարդկանց աշխատանքից հեռացնելիս անհատական մոտեցում չի ցուցաբերվել:

Մինչդեռ, այդ ամենի հետեւանքով գործազուրկ է դարձել Արցախյան հերոսամարտի մասնակիցը, մյուս երկուսը զրկվել են երեխա որդեգրելու հնարավորությունից, հաջորդը հայտնվել է երեք անչափահաս սիսիանցի հոգալու խնդրին դեմ հանդիման, մեկ ուրիշն էլ վարկ է վերցրել, որ պիտի մարի, մյուսն էլ ուսանող-զավակի ուսման վարձը պետք է վճարի...

Խնդրում ենք Ձեզ՝ մի քանի ակնթարթ մոռանալ օպտիմալացում, կրճատում ոչինչ չասող բառերը եւ կոնկրետ փաստարկներով ներկայացնել, թե 14 հոգուց յուրաքանչյուրն ի՞նչ հիմքերով է աշխատանքից ազատվել, եւ ի՞նչ առավելություններ ունեն նոր ընդունվածները:

Հավատացեք, Սյունիքում սպառում են Ձեր (անձամբ Ձեր) պարզաբանումին, այլապես դա կդիտվի (առնվազն) խտրականություն եւ կամայականություն՝ ընդդեմ հայ մարդու, ընդդեմ Հայաստանի Հանրապետության քաղաքացու:

«Սյունյաց երկիր»

# Գրչի դեմ՝ գրչով, ո՛չ թե հրկիզումով...

## 19-րդ դարավերջի «Արմենիայից» մինչև 21-րդ դարասկզբի «Սյունյաց երկիր»

Յայ ժողովրդի կյանքում միշտ էլ կարելի էր տեսնել մամուլի դերն ու գործառնությունը: Յայ անդրամիկ պարբերականը լույս է տեսել դեռևս 18-րդ դարում՝ 1794 թվականին: Այն կրում էր «Ազգարար» անունը, որն անչափ խորհրդանշական իմաստ ունի: Այո՛, հնդկահայ գաղութում լույս տեսած «Ազգարարը» եւ նրանից հետո հրատարակված մեր բոլոր պարբերականները, որոնք տասնյակ հազարների են հասնում, հիմնականում մեր ժողովրդի կյանքում հենց ազգարարի դեր են կատարել: Նրանք ազգարարել են հայությանն ամեն ինչի մասին: Ե՛վ լավ, ե՛ւ վատ երեւոյթների մասին:

Մամուլը հոգեւոր-բարոյական, գրական ու գեղագիտական առումներով կրթել, դաստիարակել է մեր ժողովրդի միտքն ու հոգին, սերմանել առողջ ապրելակերպ ու կենսակերպ:

Մամուլը զուտ հանրային, հասարակական հնչեղության երեւոյթ է եւ այն միշտ դրսևորվել, կայացել է հանրային քննարկում: Որովհետև այստեղ կա երկու կողմ՝ թերթն իր խմբագրակազմով, թղթակիցներով եւ այն տարածողներով: Սյունյաց կողմում հանրային, հասարակական լսարանն է՝ հարյուրավոր ու հազարավոր ընթերցողներով:

1885թ. արևմտահայ նշանավոր մտավորական Մկրտիչ Փորթուգայանը Ֆրանսիայի Մարսել քաղաքում սկիզբ դրեց «Արմենիա» պարբերականի հրատարակությանը: Նա

բնատուր խելքով եւ ծիրքով ճշգրիտ պատկերացնում էր համահայկական մի ազատ պարբերականի դերը վարչական ու քաղաքական սահմաններով իրարից տարբաժանված հայության տարբեր հատվածները հոգեւոր ու բարոյական կապերով միմյանց շարկապելու գործում: Յենց այդ կարգի լրագրերի միջոցով կարելի էր նպատակ եւ ուղղություն ցույց տալ ժողովրդին՝ զուլազանելով նրան ազգավնաս ընթացքներից ու հիմնավորապես առաջ մղելով դեպի բարին, դրական ու օգտակարը: Մի որոշ ժամանակ անց Փորթուգայանը վերստին հիմնավորելով լրագրի անհրաժեշտությունը, նշում էր, որ այն այնպիսի «**հանրածանօթ բան մ է հիմա աշխարհի վրայ, որ կիսավայրենի ժողովուրդներն անգամ սկսած են այդ պետքը զգալ**» («Արմենիա», 1897թ., թիվ 9):

Ինչո՞ւ այսպես հեռվից սկսեցին 18-րդ դարի վերջերից մինչև մեր ժամանակները հայ իրականության մեջ այս հիմնախնդիրները, հարցերն ու հարցադրումները մնում են օրակարգում, ու՞ժի մեջ: Կարծես ոչինչ չի փոխվել: Նույն «Արմենիա» պարբերականը 20-րդ դարի սկզբներին անընդհատ բարձրաձայնում էր հայ ազգային կյանքում արմատավորված տգեղ, ստոր, բացասական երեւոյթների մասին:

Նախ ամիսսանք էր հայտնում, որ հայ ազգը զարգացման այն աստիճանին չի հասել, որ ինչպես օժանդակում է իր դպրոցին ու եկե-

ղեցուն, նույնպես նաեւ իր ազգային մամուլի օժանդակության կարիքը զգար ու հարկ եղած չափով օգնեւր նրա տարածմանն ու զարգացմանը:

Ընդ որում «Արմենիայի» մեծավաստակ խմբագիրը մեծ ուշադրություն էր դարձնում, ընդգծում, շեշտադրում, որ ազգերի առաջադիմությունը մեծապես հիմնված է լրագրային գործի վրա: Նա մեծ ուշադրություն էր դարձնում լրագրական բարքերում ազնիվ եւ արդարացի մտտեցումների կիրառմանն ու պահպանման վրա: «Արմենիայի» էջերում հաճախ էին քննադատվում այն պարբերականները, որոնք խախտում էին լրագրական էթիկան: «Արմենիայի» խմբագրությունը գտնում էր, որ յուրաքանչյուր վիճաբանություն իր համար պետք է սահման ունենա, որից «անդին անցնիլը ներելի չէ»: Սակայն այն ժամանակ էլ հայ լրագրական աշխարհում տեղի ունեցող անցուղարձը երբեմն ընդունում էր այնպիսի աղետալի, խայտառակ երեւոյթ, որ թվում էր, թե պատերազմական վիճակում են գտնվում այդ լրագրերը: Այդ կապակցությամբ «Արմենիան» հրավեր էր կարդում արտասահմանի գրական ասպարեզի վրա գտնվող գործիչներին, որ «... այս մասին **Չինադուլ մ'ընեն**» («Արմենիա», 1902թ., թիվ 23):

Պարբերականի էջերում բուռն բողոք ու ցասում արտահայտվեց ճանաչված հայ գրական ու քաղաքական գործիչ Արփիար Արփիարյանի դաժան սպանության կապակցու-



թյամբ: Դատապարտելով ոճրագործությունն ու ոճրագործներին, որ խմբակի կամ հոսանքի պատկանելիս լինեն, ընդգծվում է նաեւ այն հանգամանքը, թե ազատության անունից խտրողները «... էլած են այժմ սպանել մարդկային ամենաթանկագին իրաւունքն եղող ազատութիւնը, մտածումի ազատութիւնը» («Արմենիա», 1908թ., թիվ 39): Արփիարյանի չարանեց սպանության շուրջ կապված բազմաթիվ արձագանքներ հետագայում եւս տեղ գտան թերթի էջերում: Ինքը՝ պարբերականի հայրենասեր խմբագիրը, «Վայրենական բարքեր»

հոդվածում հետեւյալ ուշագրավ ու դիպուկ հարցադրումներն է անում. «**Բայց մինչև ե՞րբ պիտի տեսնենք մեր մէջ այս վայրենական բարքեր: Թիրքէն կը զանգատէինք թէ կարծիքի ազատութիւնը, մամուլի ազատութիւնը կը խեղդէ գրաքննութեան ենթարկելով. հօս, արտասահմանի ազատ երկիրներին մէջ, հայեր կան, որոնք ոչ թէ թիրքին պէս հայերին կարգիլ են գրելը, այլ կը սպաննեն ազատ գրողները եւ զիրենք արդարացուցելու համար մատնիչ կանուանեն զանոնք**» (1908թ., թիվ 3):



# Յերհեղափոխական հանելուկ Քաջարանում. ինչպե՛ս եղավ, որ մեկ տարում 9 մլրդ կամ 18 մլրդ հարկ վճարող ընկերությունը 2018-ին վճարեց 41 մլրդ դրամ

**Էջ 1** Մինչդեռ, ըստ Յայկական բնապահպանական ճակատի՝ 2014-16 թվականներին, շրջանցելով լիցենզիան, տարեկան արդյունահանվել է 17-19 մլն տոննա հանքաքար, ինչի վերաբերյալ ՊՄԿ-ն տեղեկացրել է ՀՀ բնապահպանության նախարարությանը:

2016-ի դեկտեմբերին ՉՊՄԿ-ին տրվել է նոր լիցենզիա՝ տարեկան մինչև 22 մլն տոննա հանքաքար արդյունահանելու իրավունքով:

Մինչդեռ, ըստ ՀՀ Աժ նախկին փոխխոսնակ Միքայել Սելջույանի (տեսանյութն առայսօր շրջանառվում է համացանցում) կոմբինատը կրկին շրջանցել է լիցենզիան եւ տարեկան արդյունահանել մինչև 40 մլն տոննա հանքաքար:

Յետագայում Քաջարանի դեկավարները հայտարարեցին, թե դատարանում կվիճարկեն այդ թվի հավաստիությունը, բայց այդպես էլ 40 մլն-ի վարկածը ոչ ոք հիմնավորապես չհամարձակվեց հերքել:

Դատելով վերը շարադրվածից, Յայաստանում ոչ ոք չգիտի, թե Ձանգեզուրի ՊՄԿ-ն իրականում տարեկան որքան հանքաքար է արդյունահանում: Եվ այդ ամենը՝ սկսած 2014-ից:

Դա նշանակում է նաեւ, որ հանքաքարի արդյունահանման ծավալի աճ կոմբինատում արձանագրվել է մինչև 2018 թվականը:

Դա նշանակում է նաեւ, որ 2018-ին պետությանը վճարված հարկերի մեծության մասն կտրուկ աճի համար չէր կարող հիմք հանդիսանալ հանքաքարի արդյունահանման ծավալների փոփոխությունը:

Ինչպես նշեցինք, 2018-ին պետությանը վճարվող հարկերի չափի մասն կտրուկ փոփոխության համար կարող էր օբյեկտիվ պատճառ լինել նաեւ գումարավոր մետաղների (հատկապես պղնձի եւ մոլիբդենի) գների կտրուկ աճը միջազգային շուկայում:

Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս պղնձի եւ մոլիբդենի 2018 թ. բորսայական գները, այդ մետաղների գների աճ (վճարված հարկի մեծությանը համապատասխան) չի գրանցվել 2017-ի համեմատությամբ:

Ուրիշ ի՞նչ հանգամանքի շնորհիվ կարող էր Քաջարանը մեկ տարում 23 մլրդ դրամով ավելացնել պետությանը վճարվող հարկերի մեծությունը:

Տեսականորեն կարող էր լինել մեկ այլ հանգամանք եւս.

կոմբինատը նախորդ տարիներին (ելնելով շուկայական ոչ բարենպաստ պայմաններից) կուտակել է պղնձի եւ մոլիբդենի խտանյութեր ու դրանք իրացրել 2018-ին:

Մինչդեռ, պետական վիճակագրական տվյալներում եւ կոմբինատի եղած-չեղած հաշվետվություններում մնան փաստարկի եւս չհանդիպեցինք:

Եվ ուրեմն՝ այդ ինչպե՛ս եղավ, որ մեկ տարում 9 մլրդ դրամ կամ 18 մլրդ դրամ հարկ վճարող ընկերությունը 2018-ին վճարեց 41 մլրդ դրամ:

Չէ, ի սեր Աստծո, մենք չենք ասում, որ 41 միլիարդը ստվերը մասամբ ջրի երես հանելու արդյունք է:

Բայց որպեսզի հայ հանրությունը հասկանա, թե ինչի արդյունքում Քաջարանը մեկ տարում ունեցավ պետությանը վճարված հարկերի մնան աճ, պետք է հավատ ներշնչող պարզաբանում տրվի երկրի պատկան մարմինների կողմից, ինչին եւ սպասում ենք:

Որպեսզի ընթերցողը լիովին ըմբռնի խնդրո առարկայի առանձնահատկությունները, հիշեցնենք, որ 2018 թ. հեղափոխական աշխարհացունց օրերին էր (ապրիլ-մայիս-հունիս ամիսներ), որ Ձանգեզուրի ՊՄԿ-ն միանգամից 20,5 մլրդ դրամով (նույն տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ) ավել հարկ վճարեց պետությանը:

Յետագայում այդ ցուցանիշը նորից իջավ եւ դարձավ մոտ 8 եւ 9 մլրդ դրամ մեկ եռամսյակում (խոսքը 2018 թ. երրորդ եւ չորրորդ եռամսյակների մասին է):

Նշված թվերը համադրելիս նորանոր հարցեր են առաջանում. այդ ինչի՞ շնորհիվ էր, որ հեղափոխության օրերին շոնդալից (առաջին եռամսյակի համեմատությամբ 5 անգամ) բարձրացավ պետությանը վճարվող հարկերի ընդհանուր գումարը:

Այդ ինչի՞ հետեւանքով հետագայում՝ երրորդ եւ չորրորդ եռամսյակներում վճարվող հարկերի ցուցանիշը նորից վայրէջք ապրեց:

Որպեսզի կոմբինատի հարկային վարքագիծը (2014-ից ի վեր) ավելի ամբողջանա, մեկ փաստարկ եւս:

Մաքսիմ Հակոբյանը 2007 թ. լիցենզիայով, երբ տարեկան արդյունահանվում էր մինչև 12,5 մլն տոննա հանքաքար, պետությանը տարեկան վճարում էր մինչև 37 մլրդ դրամ (2013թ.), իսկ 2012-ին՝ 31,673 մլրդ դրամ:

2014-ին, երբ փոխվեց կոմբինատի դեկավարությունը, կտրուկ փոփոխություններ եղան նաեւ կոմբինատի հարկային վարքագիծում:

Օրինակ, 2016 թվականին կոմբինատը պետությանը վճարեց 9,121 մլրդ դրամ՝ նախորդ 2015-ից 18 մլրդ դրամ պակաս, 2013-ի համեմատ՝ 28 մլրդ դրամ պակաս:

Ի՞նչն է զարմանալի. հարկերի չափի մնան կտրուկ նահանջի համապատկերի վրա գլխավոր տնօրեն Միկո Արդուսյանի շնորհիվ «Ամանիա Շիրակացի» մեղալ, իսկ գլխավոր տնօրենի տեղակալ Վահե Ա. Հակոբյանը նշանակվեց Սյունիքի մարզպետ:

Վերահաստատեցք թիչ առաջ արված պնդումը՝ միզուցե այդ ամենը բնական եւ օրինաչափ զարգացումների՝ արդյունք է:

Այդ դեպքում ինչո՞ւ մանրամասն եւ հասկանալի լեզվով հանրությանը չենրկայացնել, թե ինչու եւ ինչպես 37 մլրդ դրամ դարձավ 9 մլրդ դրամ, իսկ 9 միլիարդը՝ 41 միլիարդ:

Վերահաստատեցք նախկինում քանիցս հնչած միտքը՝ նախորդ իշխանությունները տարբեր պատճառներով չէին կարող վերծանել քաջարանյան առեղծվածներից այդ մեկը եւս:

Նախկինները չկան այլևս:

Յիմա նոր իշխանություն է, որն անգամ հանրակրթական դպրոցներում բացահայտվող մի քանի տասնյակ հազար դրամի չարաշահումների դեպքում քրեական հետապնդում է իրականացնում:

**Յետեւաբար՝ ակնկալում ենք, որ Քաջարանի կոմբինատի 2014-18 թթ. հարկային վարքագիծը կվերծանվի ու կնեւրկայացվի հանրությանը. դա կլինի հեղափոխության երրորդ կոմկրեստ քայլը Սյունիքում՝ 2018 թ. հունիսի 8-ի մարզպետափոխությունից եւ հանքերի իրական սեփականատերերին բացահայտելուն միտված օրինագիծը մշակելուց հետո:**

Մի հիշեցում էլ մեր վաղեմի բարեկամ Նիկոլ Փաշինյանին՝ Յայաստանում իրականացվող հեղափոխական գործընթացների անկեղծության բարոմետրը (եւ միակ բարոմետրը) Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանդեպ նոր իշխանության վերաբերմունքն է. համեմայնողապ այդպես են մտածում տասնյակ հազարավոր սյունեցիներ:

Փորթուգալյանն ի լուր հայ քաղաքական բոլոր ուժերի վճռականորեն հայտարարում է, թե պետք է վերջ տալ այս վայրենական բարբերին եւ պետք է ազատել հայ ստեղծագործ միտքը ու գրիչը տգեղների ու ազատության թշնամիների բռնություններից:

Ահա՛ այսպիսիք են փաստերը ու իրողությունները: Փորթուգալյանի եւ «Արմենիայի» ժամանակներից անցել է մեկից մեկուկես դար: Սակայն ի՞նչ է փոխվել մեր իրականության մեջ: Ջարմանակի է, որ մեր հանրային մտածելակերպը ու վարք ու բարբերը մնացել են նույն հարթության ու նույն մակարդակի վրա:

**Սամվել Ալեքսանյանը որպես խմբագիր, լրագրող, հանրային գործիչ վաղուց է հայտնի ոչ միայն Սյունյաց երկրամասում, այլև ողջ հանրապետությունում:**

Նա որտեղ աշխատել է, բարեխիղճ ու պարտաճանաչ ծառայել է հայ հասարակությանը:

Նրա մտածողության, ինտելեկտի, հայացքների, գրական ամուրանակի ճիշդի եւ լրագրողական տաղանդի մասին վկայում են հարյուրավոր ու տասնյակ հարյուրավոր հոդվածները, ակնարկները, հարցազրույցները, խոհերն ու այլ նյութեր: Նա այսօր նույնքան դժվարին կացության մեջ է հրատարակում «Սյունյաց երկիր» լրագիրը, որքան Փորթուգալյանը՝ «Արմենիա» լրագիրը: Ես նախելառաջ նկատի ունեմ նյութական ոչ բարվոք պայմանները եւ մամուլի հանդեպ եղած վերաբերմունքը:

Ի բարեբախտություն մեզ, եւ իր ժամանակին Փորթուգալյանը, եւ ներկայումս Սամվել Ալեքսանյանը պարզապես խիզախում են իշխող անբարենպաստ համայնքների դեմ: Քանզի իրենց հոգում հայրենի երկրին ու ժողովրդին անշահախնդրորեն ծառայելու իղձը, տենչն ու մարմաջն ունեն:

Սակայն, ցավոք, այսօր եւս հայ խմբագրի, հայ լրագրողի դեմ ունենք պայքարում են ոչ թե գրչով կամ խոսքով, այլ դավադիր ու ստոր մեթոդներով խմբագիրներին ահաբեկելով, խմբագրության վրա հարձակումներով, խմբագրության ունեցվածքի հրկիզումով:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրի մեքենան առաջին անգամ չէ, որ հրկիզվում է կամ պայթեցվում:

Եվ առաջին անգամ չէ, որ խանգարվում ու հիմնովին խաթարվում է խմբագրության նորմալ, բնականոն աշխատանքը:

Բազմաթիվ անգամ եւ բազում ձեւերով փորձել են ընդհատել, արգելակել «Սյունյաց երկիր» պարբերականի ընթացքը ու երթը, եւ դա արել են ոչ թե գրչով, այլ ապօրինի, անօրինական ձեւերով ու մեթոդներով:

Հարց է ծագում. ինչո՞ւ, ինչո՞ւ է քաջապետ վարվում պարոնայք: Մի՞թե Սամվել Ալեքսանյանին լռեցնելով եւ նրա պարբերականը փակելով, հայրենի երկրին որեւէ օգուտ է տալիս: Ուզո՞ւմ եք, որ Սամվել Ալեքսանյանը ձեզ հաճու լինի եւ աչք փակի ձեր ապօրինի գործերի վրա... Այդ դեպքում նա կդադարի իր մասնագիտական ու քաղաքացիական պարտքն ու պարտավորվածությունը կատարելուց եւ կդառնա պարզապես մի վարձու գրչակ (ի դեպ, մեզանում այդպիսիները քիչ չեն...):

Սամվել Ալեքսանյանի դեպքում այդպիսի բան չի կարող լինել, քանզի նա ծանր, անձնագործ ջանքերով է նվաճել իր անբասիր հարգանքն ու հեղինակությունը հանրության լայն շերտերի շրջանում:

Անտարակուսելի է նաեւ, որ ժողովրդականության դափնիներ շահելու համար չէ, որ հանդես է գալիս «Սյունյաց երկիր» պարբերականը, այլ ժողովրդին, հանրային գործերին ու գիտակցությանն օգտակար լինելու, հասարակական շահերին ճշմարտապես ծառայելու նպատակով:

Նորից ու վերստին վկայակոչում եմ Մկրտիչ Փորթուգալյանին՝ արեւմտահայ այդ խիզախ մտավորականին: Որքան ճշմարտացի եւ իրավացի էր նա, երբ լրագրի ու լրագրողի գործը համեմատում էր պատերազմի դաշտում գտնվող ռազմիկի հետ, այն տարբերությամբ, որ «... պատերազմին դաշտին վրայ գնդակահար մի քանի վայրկեանի մեջ մեռնիլը չէ այնչափ դժուար, որչափ ամբողջի տգիտութեան եւ նախապաշարունակներին դեմ կռուիլը եւ երկար տարիներ իր ազգի համար հոգեմաշ տանջանքների մեջ չարչարուելով եւ ամեն օր մաս առ մաս սպանունելով գործելը» («Արմենիա», 1905թ., թիվ 45):

Այո՛, սա առանց չափազանցության, ճշմարիտ համեմատություն է, քանզի հայ խմբագիրն ու գրողը, ուսուցիչն ու դաստիարակը տարիներ ու տասնամյակներ շարունակ անում էին եւ անում են շատ ավելի ծանր ու տառապալից գործ, քան հեղափոխականն ու զինվորը՝ մարտի դաշտում:

**Հայ քաղաքական իրականության մեջ գործող հետադեմ ու խավարամիտ ուժերին կորդորերի հետեւյալը.**

**- Պարոնայք, ձեռքներդ հեռու «Սյունյաց երկրից» ու Սամվել Ալեքսանյանից: Միեւնո՛ւյնն է, չե՛ք հաջողելու...**

**Արմեն Կարապետյան**

**Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, ՀՀ լրագրողների միության անդամ**

# Այն, ինչ արվել է «Սյունյաց երկիր» թերթի դեմ՝ վանդալիզմ է



Չեմ կարող լռել եւ անտարբեր անցնել բոլորիս սիրելի «Սյունյաց երկիր» դեմ գործած հերթական բռնության կողքով: Ցավում եմ, որ մեր լեռնաշխարհի լավագույն եւ իր տեսակի մեջ միակ լրատվամիջոցի հանդեպ նման քայլ է կատարվել: Արարքը ստոր է, նողկալի, հայ մարդուն եւ հատկապես սյունեցուն ոչ հարիր, եթե, իհարկե, այդ արարքի հեղինակը հայ է ու սյունեցի:



Տեսնելով հանրության ամենատարբեր խավերի ներկայացուցիչների բուռն արձագանքը՝ ի պատասխան «Սյունյաց երկիր» դեմ կատարված ստոր արարքի, հույս է արթնանում, որ՝ այդ, Սյունիքի մարզում իրավիճակ է փոխվում: Ուզում եմ հավատալ, որ այսուհետ տեղական ոչ մի օլիգարխ, իշխանության մեջ հանգրվանած որեւէ ցեղ մախիկին պես չի կարողանալու այլևս իր լկտիությունն ու սամարթակությունը բանեցնել, քանի որ հանրությունը, թեկուզ եւ ուշացումով ու դանդաղորեն, դառնում է գործոն:



Այն, ինչ փետրվարի 5-ին ձեռնարկվեց ընդդեմ «Սյունյաց երկրի», ուղղակիորեն շոշափում է նաեւ Կապանի արժանապատվությունը:

Ուստի եւ բազմաթիվ կապանցիներ (այդ թվում՝ ինքս) ոչ միայն մեր գայրույթն ենք արտահայտում, այլև, իրավապահ մարմիններին զուգահեռ, ամուսն ենք հնարավորը՝ հանցագործներին բացահայտելու համար:

Այո, դա նաեւ մեր պարտքն է, մանավանդ որ «Սյունյաց երկիր» բոլորիս թերթն է, լրատվամիջոցի մեր ուզած տեսակը:

Լինելով կապանցի, կրելով կապանցուն բնորոշ արժանիքներն ու հատկանիշները, չեմ հավատում, որ թերթի հանդեպ եւ փետրվարի 5-ին, եւ դրանից առաջ կատարված ու չբացահայտված հանցագործություններին մասնակից է եղել որեւէ կապանցի:

Դա ավելի շատ դրսի մարդկանց, օտար եւ անհայրենիք արարածների հետք է հիշեցնում, ինչին Սյունիքում առնչվում ենք վերջին տարիներին մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Կապանցին ձեռք չի բարձրացնի հոգեւոր-մշակութային որեւէ արժեքի, առավել եւս՝ ազատ մտքի ու խոսքի հարթակ «Սյունյաց երկրի» դեմ:

Այն, ինչ արվել է «Սյունյաց երկիր» դեմ՝ վանդալիզմ է. երեւի հենց դա է տեղի ունեցածի ճիշտ բնութագիրը:

Ցավում եմ, որ մեր օրերում դեռեւս հնարավոր է լրատվամիջոցի դեմ իրականացնել նման հանցագործություն:

Թերթի խմբագրականում մտադրում են տոկոսություն եւ ստեղծագործական նոր հաջողություններ:

Բարեկամաբար հորդորում եմ շարունակել աշխատել նույն ուղիով, ինչպես աշխատել եք տարիներ շարունակ:

Դուք նման փորձություններ շատ եք տեսել եւ ոչ մի պարագայում չեք նահանջել:

Ազատ խոսքը, սեփական դեմք ու դիմագիծ ունենալը, պարզվում է վերստին, շատ մեծ ջանք եւ համարձակություն է պահանջում, իսկ այդ որակները, բարեբախտաբար, խմբագրականում չեն պակասում:

Այնպես որ՝ պիտի չկանգնել եւ պիտի առաջ գնալ, որովհետեւ «Սյունյաց երկիր» առաքելությունը դա միայն «Սյունյաց երկրի» առաքելությունն է:

Աստված ձեզ պահապան:

**Սուսաննա Մարտիրոսյան  
Մշակույթի եւ հասարակական գործիչ**

Բայց այլ ուղղությամբ են խոսքս ուզում տանել, ավելի ճիշտ ասելիքս ուղղում են թերթի խմբագրին՝ Սամվել Ալեքսանյանին:

Ի՞նչ եմ խնդրում:

Երբեք եւ ոչ մի պարագայում չհանձնվել Սյունիք ներխուժած ասպատակներին ու նրանց տեղացի գործակալներին, ովքեր, ցավոք, շուն Ֆրանգյուլի շառավիղներն են եւ կապ չունեն սյունեցու իսկական տեսակի հետ:

Թուլացնել թերթի գործունեությունը, հրաժարվել որդեգրած գծից՝ նշանակում է նրանց վերակենդանանալու շանս տալ, նրանց երկարակյանություն հաղորդել:

Հիշիր, իրենք վախկոտ են եւ ստրուկ, իրենք ծիծաղելի են եւ պարտված, այլապես չէին իջնի մինչեւ հատակ եւ վրեժ չէին լուծի թերթի մեքենայից անգամ:

Իրենց գողացած միլիարդները քո վաստակած ամեն մի լուծալի դիմաց գրո են, այլապես սյունիքյան հանրությունը հերթական անգամ նրանց չէր նետի աղբանոց:

«Սյունյաց երկիրը» վաղուց արդեն ու ընդմիջտ մտել է մեր լեռնաշխարհի պատմության մեջ:

Մինչդեռ իրենք չեն մնալու սերունդների հիշողության մեջ, իսկ եթե նույնիսկ հիշվեն, ապա միայն անձեքի համար:

Ուրեմն եւ՛ նորից ու կրկին քեզ եղբայրության ձեռք ենք մեկնում Մեղրիից եւ հաջողություններ մաղթում՝ թերթի փառահեղ ու վաստակաբեռ կողմնակի դեկավարման, ինչպես եւ ստեղծագործական աշխատանքում:

**Մարատ Օհանյան**

Տեղի ունեցածն առիթ է, որ հիշեցնենք հանրապետության նոր կառավարությանը եւ մասնավորապես հարգելի վարչապետին՝ Դուք ուշադրությունից դուրս եք թողել Սյունիքը եւ ընդունել եք կեցվածք, թե իբր վերջին տարիներին Սյունիքում չէ, որ պետական բարձրաստիճան պաշտոնյաների ու օլիգարխների մասնակցությամբ տեղի են ունեցել խայտառակ իրադարձություններ՝ ընդդեմ մարդու իրավունքների, ընդդեմ գործող օրենքների, ընդդեմ սյունեցիների արժանապատվության:

Եւ դրանց հեղինակները ոչ միայն պատասխանատվության չեն ենթարկվել, այլև իրենց սեւ գործը շարունակում են մարզում:

Սյունիքի հանդեպ հանրապետության նախկին իշխանավորների անտարբերությունն այսպես էին հիմնավորում- պարզաբանում կախված են Քաջարանի հարստությունից, Քաջարանի թաքնված հանքատեղիից:

Իսկ ինչո՞ւ է կաշկանդված նոր Հայաստանի նոր դեկավարությունը սյունիքյան գործերում:

Երբ օտար մի պետության մեջ ինչ-որ արտառոց դեպք է տեղի ունենում՝ կապված մարդու իրավունքների եւ հատկապես լրատվամիջոցների ու լրագրողների հետ, մեր երկրի առաջին դեմքերն անմիջապես արձագանքում եւ դատապարտում են:

Բայց երբ օրը ցերեկով վայրագություն է կատարվում Սյունիքի մարզային թերթի դեմ, նույն այդ դեկավարները ոչ միայն չեն արձագանքում, այլև վախենում են գնահատական տալ:

Մի՞թե նորից Քաջարանի գործոնն է աշխատում, մանավանդ որ «Սյունյաց երկիրը» Հայաստանի միակ լրատվամիջոցն է, որ բացեիքաց, հիմնավորումներով, արդարացիորեն խոսում է հանքարդյունաբերական այդ կղզյակից բխող խնդիրների մասին:

**Եւ, այդ ամենով հանդերձ, սպասում ենք, որ վարչապետ պարոն Փաշինյանը գնահատական կտա «Սյունյաց երկրի» հետ շարունակաբար տեղի ունեցող եւ չբացահայտվող միջադեպերին ու համապատասխան մարմինների միջոցով կապահովի հավատ ներշնչող հետաքննություն եւ նախաքննություն, թե չէ, ինչպես շրջանառվում է, փորձ է կատարվում 15 ժամ տեղում կանգնած մեքենային վերագրել ինքնահրկիզման վարկած:**

**Գագիկ Օհանյանյան**

# Ուլքեր եւ ի՞նչ ճանապարհով են 2014-17 թթ. Սյունիքում կապարել սեփականության վերաբաշխում

Մի անձնեղ պատվիրան թիվ 12 ընտրատարածքից Աժ պատգամավորներ Արմեն Խաչատրյանին, Կարեն Համբարձումյանին, Տիգրան Կարապետյանին, Սրբուհի Գրիգորյանին, Սերգեյ Բագրատյանին եւ Նաիրա Զոհրաբյանին



Արմեն Խաչատրյան



Կարեն Համբարձումյան



Տիգրան Կարապետյան



Սրբուհի Գրիգորյան



Սերգեյ Բագրատյան



Նաիրա Զոհրաբյան

**Հարգելի պատգամավորներ**  
Սյունիքում ուրախությամբ ընդունեցին տեղեկատվությունն այն մասին, որ կառավարությունը ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել օրենքի նախագիծ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Ե՛վ օրինագիծը, ե՛ւ կառավարու-

թյան նիստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը (այդ օրինագծի վերաբերյալ) հույս են ներշնչում, որ, ի վերջո, կբացահայտվեն «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության իրական բաժնետեր կազմակերպությունները եւ բաժնետեր կազմակերպությունների սեփականատերերը՝ անուն առ անուն, եթե անգամ նրանք գրանցված լինեն օժտորների խորհրդատ-

ներում եւ դիմակավորված լինեն անենաարդիական դիմակներով:

Հավատացեք, դա հիրավի հեղափոխական օրինագիծ է հատկապես Սյունիքի մարզի համար:

Դա այն եզակի օրենքն է, որը հնարավորություն կընձեռի Սյունիքում ամբողջապես վերականգնել պետական եւ սահմանադրական կարգն ու վերջակետել հայտնի ավազակախմբի գործունեությունը

մեր լեռնաշխարհում:

Սակայն այդ օրենքը պռատ կլինի եւ չի ծառայի բուն նպատակին, եթե հանքերի իրական տերերին դիմակազերծելուց հետո օրենքի ուժով չպահանջվի պարզաբանում լեռնահանքային ձեռնարկությունների բաժնետերերից առ այն, թե ով է ինչ ճանապարհով ու ինչ միջոցներով է դարձել հանքարդյունաբերական ձեռնարկության բաժնետեր:

Բանն այն է, որ 2014-17 թթ. Սյունիքում եւ հատկապես «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ում տեղի է ունեցել սեփականության վերաբաշխում:

Տարբեր վարկածներ են շրջանառվում մարզում այն մասին, թե ինչ եղանակով է կատարվել սեփականության վերաբաշխումը:

Ավելի խիտող է այն տեսակետը, թե Քաջարանի կոմբինատի բաժնետոմսերի

# Գործազրկությունը Կապանի փարածաշրջանում

Գործազրկությունը Սյունիքի մարզում համրապետության միջինից բարձր է, չնայած որ մարզում են գտնվում հանրապետության հանքարդյունաբերության երեք խոշոր ձեռնարկություն՝ Ձանգեզուրի պղնձամոլիբդենային, Կապանի լեռնահարստացման եւ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները, քարհանքեր ու ավազահանքեր, լեռնային գետերը հնարավորություն են ընձեռում զարգացնելու հիդրոէներգետիկական փոքր հէկ-երի տեսքով:

Ինչեւէ, երբ նշվում է գործազրկության մասին, թվերի լեզվով խոսելը պարզապես անհրաժեշտություն է դառնում: Մինչեւ 2014 թվականը զբաղվածության կենտրոնը մարզային կարգավիճակ ուներ, այժմ տարածաշրջանային է: Ուստի այս անգամ սոցիալական այդ երեւույթը ներկայացնում ենք Կապանի տարածաշրջանի օրինակով, որտեղ գործազրկությունն ընդհանուր գծերով հետեւյալ պատկերն է ներկայացնում: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ աշխատանք է փնտրում 1306 հոգի, որից՝ 933 կին, կենտրոնում գրանցված գործազուրկներ թիվը 1155 է, որից 828-ը՝ կին:

Ըստ մեր ձեռքի տակ ունեցած հաշվետվության՝ միջնակարգ-մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտածները եւս դժվարությամբ են աշխատանք գտնում: Ընդհանուր առմամբ գործազուրկների թվակազմը կրթական մակարդակի առումով հետեւյալն է՝ բարձրագույն կրթություն ունեն 116 հոգի, որից 89 կին, միջին-մասնագիտական՝ 384, որից 336-ը՝ կին: Անգեղն աչքով էլ նկատելի է բարձրագույն եւ միջին-մասնագիտական կրթություն ունեցող կանանց տեսակարար կշիռը որքան բարձր է: Փոքր-ինչ հուսադրող է այն փաստը, որ աշխատանքի տեղավորված 254 հոգուց 175-ը կին է: Կենտրոնի անվանումը հուշում է, որ նրա հիմնական նպատակը պիտի լինի աշխատանքի տեղավորելը: Այս առումով 2018-ին զբաղվածության կենտրոնի կողմից աշխատանքի տեղավորվածներից

34 հոգի զբաղմունք է գտել պետական ամենամյա ծրագրերով:

Հաշվետվության մեջ մի թիվ էլ աչքի զարնեց. գործազուրկների կարգավիճակ ունեցողներից 281-ը գյուղաբնակ է, եւ դա այն դեպքում էր որ հողն ինքնին աշխատատեղ է: Հայ շինականը, դարեր ի վեր հողի վրա տքնելով, հոգացել է իր համապատասխան հոգսերը: Իսկ 1990-ականներին գյուղաբնակն ի՞նչ էր ստանում արտերկրից որպես բարեգործական օգնություն՝ կաթի փոշի եւ ամերիկյան չոր լոբի, մթերքներ, որ ինքը պիտի արարեր: Տրամաբանությունն այն է, որ պետք է կարծ նվիրել եւ ոչ ձուկ:

Անցնելով խնդրո առարկային, արդ ինչպիսի՞ն է զբաղվածության կենտրոն-գործատու փոխհարաբերությունը: Կենտրոնի տնօրեն Արթուր Հակոբյանի փոխանցմամբ, ով կառույցը ղեկավարում է 2014 թվականի հունիսից, կենտրոնը համագործակցում է 572 գործատուի հետ: Խոշոր ձեռնարկություններից պարտաճանաչը Կապանի լեռնահարստացման կոմբինատն է. «Հիմնականում մեզ դիմում են փոքր բիզնեսի ներկայացուցիչները՝ սպասարկման եւ հանրային սննդի օբյեկտների տերերը: Թեպետ այն էլ ասենք, որ այս վերջին շրջանում Լեռնաձորում կարի արտադրամաս բացվեց՝ կարող բանվորուհիների առաջարկ կա: Եվ որքան տեղյակ են, արտադրամասի ղեկավարը նախատեսել է ընդլայնել արտադրությունը»:

Ինչպես նշվեց, այս պահին զբաղվածության կենտրոնում գրանցված է 1155 գործազուրկ, բայց այդ թիվը չափազանց հեռու է Կապանի գործազրկության իրական պատկերն արտացոլելուց: Իրական թիվն անհամեմատ մեծ է, գործազուրկ մարդկանց մի ստվար մասը չի դիմում կենտրոն, ավելի շուտ՝ հույսն իր վրա է դրել, նաեւ մեծ մասը ցանկանում է ոչ ուրից գործեր անել:

«Ցավոք, տարածաշրջանի ամենախոշոր ձեռնարկությունը՝ ԶՊՄԿ-ն, չի համագործակցում զբաղվածության կենտրոնի հետ, չի էլ համագործակցել, համե-



նայն դեպս կոմբինատի թափուր աշխատատեղերի մասին կենտրոնում տեղյակ չեն: Կապանի լեռնահարստացման կոմբինատն իր թափուր աշխատատեղերի մասին պարբերաբար իրազեկ է պահում կենտրոնին, այս պահի դրությամբ նրանք կապիտալ շինարարության բաժնի պետի կարիք ունեն, եւ ոչ միայն պետի, նախեսառաջ բանվորի: Դիմում են մեզ, մենք էլ ներկայացնում ենք մեր գործազուրկներին: Ցավոք, ԶՊՄԿ-ն չի համագործակցում մեզ հետ, իսկ բնակչության մեծ մասը ցանկություն ունի աշխատել այդ ձեռնարկությունում, այդ մասին են վկայում Սյունիքի մարզպետին ու հանրապետության վարչապետին հղած դիմումները: Ցավոք, նրանք չեն համագործակցում, մենք էլ չենք կարողանում օգնություն ցուցաբերել»,- մանրամասնում է տնօրենը:

Ի սկզբանե գործազուրկներին տրվում էր նպաստ, ինչը պայմանավորված էր նրանով, թե գործազուրկն ինչ պատճառով է կորցրել աշխատանքը կրճատման, թե՛ սեփական դիմումի համաձայն: 2014-ի կեսերից վերացվել է գործազուրկների նպաստը հատկացնելու կարգը, ինչը կենտրոնի տնօրենը հետեւյալ կերպ է մեկնաբանում. «Նպաստները, բարեգործությունները մեր ժողովրդին ծուլության, անբանության են մղում, «ամենապահանջված» մասնագիտությունը գործազուրկների շրջանում

պահակն է, ոչ մեկը չի ուզում հանքում աշխատել եւ բարձր աշխատավարձ ստանալ»:

Կենտրոնի տնօրենի հետ մեր հետագա զրույցը զբաղվածության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի մասին էր, որոնք միտված են գործազրկության փոքրիշատե մեղմմանը: Արթուր Հակոբյանի փոխանցմամբ՝ 2018 թվականին Կապանի տարածաշրջանում հինգ ծրագիր է ֆինանսավորվել պետության կողմից, այս տարում կիրականացվի 12 ծրագիր, որ եղել են նախկին տարիներին: Նախորդ տարվանից ավելացել է (փորձական արվել է եւ այս տարում հիմնավորապես կներդրվի) դայակների աշխատանքի փոխհատուցման եւ երիտասարդ մայրերի ուսուցման ծրագրերը: Առաջինի դեպքում աջակցությունը տրամադրվում է երեխայի մինչեւ երկու տարեկան լրանալը: Աջակցությունը տրվում է երեխայի խնամքի համար ծառայության մատուցման կամ աշխատանքային պայմանագրով սահմանված վարձատրության 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձը, որ ներկայումս 55 հազար դրամ է: Դայակի վարձավճարի կետը հատկացնում է զբաղվածության կենտրոնը, կամ որ միեւնույնն է պետությունը: Գործող չափանիշների համաձայն՝ աշխատանքն ըստ դայակի ցանկության կարող է համարվել աշխատանքային ստաժ, եթե նա եկամտահարկ է վճարում:

Երիտասարդ մայրերի համար, ուլքեր մասնագիտություն չունեն եւ առաջին անգամ պիտի աշխատաշուկա մտնեն, իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսուցում է կազմակերպվում մինչեւ վեց ամիս ժամկետով: Այդ ընթացքում զբաղվածության կենտրոնն աշխատավարձ է վճարում ուսուցանվողին եւ այն կազմակերպությանը, որտեղ երիտասարդ մայրն ուսուցում է անցնում:

Այս տարում վերականգնվել է նաեւ սեզոնային խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության ծրագիրը, որն առաջնահերթության կարգով իրականացվում է լեռնային, բարձր լեռնային եւ սահմանամերձ բնակավայրերում: Ծրագրի առավելագույն տեսչությունը երեք ամիս է, ծրագրի արժեքը չի գերազանցում 350 հազար դրամը:

Անասնաբուծությունը խթանելու համար եւս ծրագիր է գործում: Եթե գյուղաբնակ սեփական անասուն չունի (կով, ոչխար, խոզ) պետությունը մեկ միլիոն դրամ է հատկացնում: Այդ գումարով գյուղացին, ասենք, կարող է հղի կով գնել, եւ առաջին տարվա համար պետությունը եւ անասնակերի, եւ անասնաբուծական սպասարկման գումարն է հատկացնում:

2019 թվականին Կապանի զբաղվածության կենտրոնում իրականացվող ծրագրերն առնչվում են նաեւ աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորմանը, նրանց համար պրակտիկայի կազմակերպմամբ, հաշմանդամություն ունեցող անձանց համար մասնագիտական ուսուցում կազմակերպելու եւ այլն:

Ծրագրերը՝ ծրագրեր, բայց գործազրկության սահմանները նեղացնելու, բնակչության զբաղվածությունը փոքրիշատե ապահովելու համար անհրաժեշտ է պետական լուրջ քաղաքականություն, սրտացավորեն մոտեցում հիմնախնդրին, այլապես թվարկված ծրագրերը կաթիլ են օվկիանոսում:

# Իմ Ռոբերտ Ամիրխանյանը

էջ 2  
Կերտուսաշուկի ընթացքում չեն կարողանում գուշակել իրենց իսկ ստեղծած մեղեդին:

Վերելում նշված ֆիլմի գլխավոր հերոսներից մեկը՝ Շերենց հայրիկն ասում է՝ Հայաստանում այդ երգը միայն ես գիտեմ: Մի փոքր ճշտում՝ Հայաստանում այդ երգը, ինչպես նաև մասերոսի ստեղծած բազում տասնյակ երգեր շատերը գիտեն:

20-րդ դարի վերջերին Երկիր մուրակից առանձնահատուկ առաքելությամբ մեկնարկեց մի տիեզերանավ: Մարդը տիեզերքի խորքերում ապրելու հնարավոր եղբայրներին իր գոյության եւ ինտելեկտուալ մակարդակի մասին պատմող ուղերձ էր հղում. ոսկե սկավառակի վրա «Քամուց քշվածներ» ֆիլմն էր եւ Բեթհովենի ստեղծագործությունները: Բանական այլ էակի հետ շփվելու համար մարդն ընտրել էր ամենապարզ ու հասկանալի լեզուն՝ երաժշտության լեզուն: Իզուր չի ասված, որ երաժշտությունը համայն մարդկությանը ծանոթ մայրենի լեզուն է: Հենց այդ լեզվով է մասերոս Ռոբերտ Ամիրխանյանը խոսում ոչ միայն հայ մարդու, այլ նաև տասնյակ այլ ազգերի ունկնդիրների հետ: Նրա երգը, եթե նույնիսկ ցավի մասին էլ է, երբեք ցավ չի պատճառում, այլ ամոքում, բուժում է:

Խոստացել էի հնարավոր սխալներից ու բացթողումներից խուսափելու համար գերծ մնալ երաժշտության մասին մասնագիտական բնույթի կարծիքներ արտահայտելուց, բայց գայթակարողությունը մեծ է, եւ ես փոքր-ինչ տեղի եմ տալիս՝ կամխավ հայցելով ընթերցողի ներողամտությունը: Երգը երաժշտական ժանրի ամենափոքր գործն է: Սակայն կախված հեղինակի արհեստավարժությունից, ունկնդիր-լսարանի ընդունելությունից, երբեմն այն աճում, մեծանում է՝ հասնելով երաժշտական ամենամոռումնենտալ կտավի մակարդակին: Դրանով է պայմանավորվում նաև երգի երկարակետությունը: Որպես շարքային ունկնդիր, ինձ համար այդպիսի երգեր են «Հայի արքեր», «Երազ իմ երկիր», «Այնպես ուզում եմ», «Տաղ անծնական», «Երկու կրունկ», «Ուր եք, տղաներ», «Կարմիր ծաղիկ մը գարունի», «Անանձնություն»: Այս թվարկումն ընթերցողը երկար կարող է շարունակել:

Մի խումբ երկրպագուների խնդրանքով 2005 թվականի օգոստոսին Ռոբերտ Ամիրխանյանը հեղինակային համերգով հանդես եկավ Գորիսում: Այդ գործը նախաձեռնողներից մեկն էլ ես էի: Երբ խոսք բացեցինք տոմսերի վաճառքի մասին, կտրակահարկից առաջարկվեց այդ հարցը քննարկել՝ պատճառաբանելով, որ մեր հասարակությունը սոցիալական այն վիճակում չէ, որ իրեն ունկնդրելու համար վճարի: Նա պահանջեց, որ մուտքն ազատ լինի, իսկ մենք պնդեցինք մերը: Ի վերջո համաձայնության եկանք, որ համերգը կայանա հրավիրատուներով: Պայմանավորվածությունում ձեռք բերվեց, որ այդ հարցով զբաղվի քաղաքապետարանն իր մշակույթի բաժնի հետ: Համերգին դահլիճում ազատ տեղեր շատ կային: Քաղաքապետարանից ոչ ոք համերգին չէր եկել, իսկ նրա եմբակայության հիմնարկ-ծեռնարկություններից միայն մի մանկապարտեզի վարիչ էր դահլիճում: Պատճառն այն օրերին իշխանությունների նկատմամբ նրա ընդդիմադիր պահվածքն էր: Եվ չնայած դրան, համերգն անցավ շատ բարձր մակարդակով: Աշխարհի շատ բեմերում հանդես եկած, համրահայտ շատ դահլիճների հանդիսատեսի ծափերին արժանացած մասերոսն տարիներ անց էլ հաճույքով էր հիշում գորիսյան համերգը, համերգին հաջորդած իրադարձությունները: Դահլիճում նրա արվեստի իսկական երկրպագուներն ու գնահատողներն էին, ովքեր համերգից հետո էլ մասերոսին չթույլատրեցին հեռանալ: Նախ մի մեծ խմբի հետ այցելեց քաղաքի ժամանակակից արվեստի թանգարան: Չնայած բավականին ուշ էր, խնդրեցի այցելել նաև գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանի արվեստանոց:

- Գնանք, եթե այնտեղ ավելի լավ է լինելու:



- Այնտեղ մի հոգու ստեղծած պատկերասրահ է, - ասացի:  
Այդ հանդիպումներն ամիսներ չանցան: Հետագայում մասերոսի օգնությամբ Երեւանում կազմակերպվեց ժիրայր Մարտիրոսյանի անհատական ցուցահանդեսը: Մի յուրահատուկ ցուցահանդես էլ կազմակերպվեց կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության շենքում, որտեղ ցուցադրվեց գորիսեցի երիտասարդների ավելի քան 20 ձեռագործ գորգ:

Ուսանող աղջիկներս Երեւանում ապրում էին Ա. Խաչատրյան փողոցի վրա: Տան հարեւանությամբ գտնվում էր մերային խանութ, որից էլ սովորաբար օգտվում էինք: Մի անգամ Ռոբերտի հետ մտանք այնտեղ: Տիրուհին, որ միաժամանակ նաև վաճառողուհի էր, տարիքի մեջ առաջացած մի տիկին, ճանաչեց մասերոսին եւ դա հաճույքով ցուցադրում էր, մի քանի անգամ նույնիսկ նրան դիմեց ամուսնով:

Մի քանի օր անց ես նորից մտա այդ խանութը, հասկանալի է, արդեն մենակ: Տիկինը լայն ժպիտով, համարյա վազելով առաջացավ դեպի ինձ, կարծես վաղուց կորցրած հարեւանուհի էր տեսել՝ հենց նոր Ձեր եղբայրն էր այստեղ, սիգարետ գնեց: Իմ եղբայրը, հա ձեր եղբայրը, մասերոս Ռոբերտը: Ահա թե ինչ, բանից պարզվում է որ Ռոբերտ Ամիրխանյանն իմ եղբայրն է: Վաղուց ակնաճշովս էր ընկել, որ մենք արտաքին որոշ նմանություն ունենք, բայց չէի կարծում, որ այդքան: Փորձ էլ չարեցի կակածի տակ առնել տիկնոջ ասածը, նրա նման ժպտացի ու դուրս եկա:

Պատմում է, որ Աժ պատգամավոր եղած ժամանակ սովորաբար միստերից հետո շենքից դուրս էր գալիս Դեմիրճյան փողոցի մուտքով: Այնտեղից մինչեւ Միության շենք ավելի մոտ էր: Այդպիսի մի օր նրան է մոտենում մի կին եւ «հացի փող» խնդրում: Մինչ ինքը գրպանից կիսադրոս դրամապանակը, կիսը, ճանաչելով նրան, մրմնջում է՝ ուրեմն դու չե՞ս գնացել, ուրեմն ամեն ինչ լավ է լինելու, եւ չսպասելով օգնությանը՝ արագ հեռանում է:

Դուտարս ընդունել էր համալսարան եւ ընկերուհու հետ պետք է ապրեք վարձակալած երկու սենյականոց բնակարանում: Չգիտեմ ինչպես էր ստացվել, բայց հենց սեպտեմբերի առաջին օրերին Ռոբերտի հետ այցելեցի նրանց: Պարզվեց, որ բնակարանում սեղան, աթոռ չկա: Աղջիկների համար գյուղից արկղերով մթերք էի տարել: Նրանք այդ արկղերից սեղան պատրաստեցին, ուտելիք, ըմպելիք դրեցին: Հաճույքով վայելեցինք: Այդ ժամանակ ես հնարավորություն չունեի տնտեսա-

կան, կենցաղային որոշ հարցեր լուծելու: Վերադարձա մեկ շաբաթ անց: Բնակարանի խոհանոցում ճամփորդական ծալովի սեղան էր դրված՝ 4 աթոռով, եւ գործարանային փաթեթավորմամբ «Արիստոն» մակնիշի էլեկտրական ջրատաքացուցիչ: Ռոբերտ Ամիրխանյանն էր ուղարկել...

Դրանից հետո էլ, մինչեւ աղջիկներիս ուսման ավարտը, մոտերքում լինելուց անցնում էր մի բաժակ սուրճ ըմպելու, դուրս գալուց էլ սառնարանի վրա կամ ծաղկամանի տակ աղջիկներին գրպանի փող էր թողնում, բայց չգիտես ինչու, «մոռանում էր»՝ այդ մասին նրանց ասել, զանգահարում, հեռախոսով էր տեղյակ պահում:

Այսպիսին է իմ ճանաչած Ռոբերտ Ամիրխանյանը:

Երեւանում լինելիս անպայման այցելում եմ նրան, հարցնում որպիսությունը: Մի այդպիսի այցելությունից հետո (նա դեռ Միության նախագահն էր), երբ ոտքի էի կանգնել եւ պատրաստվում էի հրաժեշտ տալ՝ զանգահարեցին: Մեկ-երկու կարճ նախադասություններ փոխանակելուց հետո ձեռքով մշան արեց, որ նստեմ:

- Այժմ կարելու մարդու հետ եմ հանդիպում, - ասաց նա եւ անջատեց հեռախոսը:

Հասկացա, որ «կարելու» մարդը ես եմ: Նստած տեղից բարձրացավ, տեղափոխվեց, նստեց իմ դիմաց եւ ասաց.

- 5-6 րոպե հետո մի տիկին է ներս գալու, տեղիցը չչարժվես, զրույցին էլ հնարավորության դեպքում կաշխատես մասնակցել: Իսկ մինչեւ նրա գալը հասցրեց պատմել:

1993-ի մութ ու ցուրտ ձմռանը Փարիզից զանգահարում է այդ տիկինը, ներկայանում որպես երաժշտագետ, հայտնում իր Երեւան գալու մասին եւ խնդրում օգնել: Ռոբերտը դիմավորում է նրան, ուղեկցում ոչ թե հյուրանոց, այլ իր տուն, որտեղ տան տիկինը՝ Դիման, հյուրի համար ճիշտ սեղան է բացած լինում: Նրան սպասում է նաև տաք լոգանքը: 10 օր մնում է մասերոսի հյուրընկալ օջախում, մասնագիտական համակողմանի աջակցություն ստանում: Փարիզ վերադառնալու նախօրերին Ռոբերտը նրա մոտ նկատում է ֆրանսիացի ժամանակակից կոմպոզիտորներից մեկի հայտնի երգի նոտաները: Խնդրում է նվագելու համար խոստանալով վերադարձնել. ամռանն էլ ինքը պետք է մեկնեք Փարիզ: Նրա պատմության այս մասում էլ գրասենյակի դռնից ներս մտավ 50-ին մոտ մի տիկին՝ երկու ձեռքն առաջ մեկնած: Ակնհայտորեն պատրաստվում էր գրվել տանտիրոջը: Հակառակ նրա այդ ցանկության, Ռոբերտը դանդաղ բարձրացավ տեղից, փորձ չարեց առաջանալ, միայն մեկնեց արագ, իսկ

որպեսզի նրան չառաջարկի նստել՝ ինքն էլ մնաց ոտքի վրա: Կցկոտուր պատասխանելով տիկնոջ հարցերին, ամփոփեց՝ այս մի քանի օրը խիստ զբաղված եմ լինելու, կարելու միջոցառման ենք նախապատրաստվում, եւ հայացքն ուղղեց դեպի ինձ: Ես գլխի շարժումով հաստատեցի նրա ասածը: Տիկնոջը հրաժեշտ տալուց զատ այլ բան չէր մնում անել:

Այս պատմության ֆրանսիական շարունակությունը հետեւյալն է: Փարիզ հասնելուց եւ հյուրանոցում տեղավորվելուց հետո մասերոսն զանգահարում է տիկնոջը: Գալիս է: Բարե-բարի լույսին հաջորդող նախադասությունը լինում է՝ նոտաները բերա՞ծ ես: Ռոբերտն ասում է՝ կներես, մոռացել եմ: Տիկնոջ արձագանքը՝ Ափսոս, Սարգիսը (ամուսինը) 6 դուրսով գնած էր:

Ռոբերտի արդենալինը բարձրանում է մինչեւ հայտնի միջը, բերանը չորանում է, մի կերպ արտաբերում է.

- Ձեր հասցեն գիտեմ: Վաղը եւեթ կգնեմ եւ արագ փոստով կուղարկեմ:

Բարձր կրթություն ստացած, աշխարհի մշակութային մայրաքաղաքում ապրող այդ կինը դպրոց չէր հաճախել...

Ծանր հիվանդությունից արտերկրում բուժվելուց հետո վերադառնում է տուն: Հաճելի հետ միշտ էլ մի քիչ ոչ հաճելի է լինում, թե չէ, ինչպես գյուրեղեղ կասեր, քաղցրությունն էլ տղի կզարկեր: Պարզվում է, որ այդ ընթացքում ժամանակին իր նախաձեռնությամբ ստեղծված երաժշտական քուլեջի նորաթուխ տնօրենն իրեն ազատել է աշխատանքից: Պատճառը՝ Ռոբերտ Ամիրխանյանը համապատասխան կրթություն չունի: O tempore, o mores...

Նոյեմբերին կամերային երաժշտության տանը ես էլ էի վայելում Ռոբերտ Ամիրխանյանի սիրված երգերի նորաձեռն կատարումը երգչախմբի մասնակցությամբ: Համերգից հետո ունկնդիրը երկար ժամանակ չէր ցանկանում բաժանվել նրանից: Ձեռքի նշանով փոքր-ինչ իջեցնելով լսարանի ծափերի ծայրը, ասաց՝ ձեր ծափերը սովորական ծափեր չեն: Դրանցից ես հսկայական էներգիա եմ ստանում: Հարեւանս, որի հետ հասցրել էի ծանոթանալ համերգից առաջ, ինձ լսելի լինելու համար հավելեց՝ մենք ավելի շատ ենք ստանում: Ինչու՞ էր ինձ ասում, մասերոսին ասացեք: Եվ կասեմ, - ոգեւորվեց նա եւ ասվածը կրկնեց համարյա գոռալով: Չգիտեմ, նրա ձայնը մասերոսին լսելի՞ եղավ, թե՞ չէ, բայց հաստատ լսելի եղավ դահլիճի հարյուրավոր ունկնդիրներին:

Ստացվեց այնպես, որ համերգից հետո միայն երկու շաբաթ անց կարողացա նրա հետ հեռախոսով կապվել: Պատմեցի: Արձագանքն անպասելի չէր՝ նման երեւոյթները չեն կարող միակողմանի լինել: Ես հանդիսատեսից ստացածի միայն մի մասն եմ կարողանում վերադարձնել:

Մասերոսն այս անգամ էլ չդավաճանեց իրեն...

Նա ինձ ասում է, թե գտել է երկարակետության գաղտնիքը եւ հուճկով ձեւակերպում՝ երկարակետության գաղտնիքը ծերանալու մեջ է: Ես այլ կերպ եմ մեկնաբանում նրա ասածը. երկարակետության գաղտնիքը կյանքը լիարժեք ապրելու մեջ է, այնպես, ինչպես դու ես ապրում:

Դու ասում ես նաև, որ սիրելի մեկին, նշանակում է պատասխանատու լինել նրա համար: Այդպիսիք թեզ համար հազար-հազարներն են: Իսկ գիտե՞ս, որ թեզ համար էլ պատասխանատվություն են կրում միլիոնավորները, որոնցից շատերը գուցեթե թեզ երբեւէ չեն տեսել, այո, չեն տեսել, բայց պատասխանատու են: Դու պարտք ես նրանց, ու այդ պարտքը մարելու համար պարտավոր ես ապրել երկար ու բեղուն ստեղծագործական կյանքով:

Ռեդիկ Հայրապետյան  
Ք. Գորիս

# Կապանի կոմբինատի նոր սեփականատերն սկսել է աշխատանքը



## CHAA RAT

Կապանի կոմբինատի նոր սեփականատերն սկսել է աշխատանքը «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի նոր սեփականատեր «Չաարատ Գոլդ Դոմեյնս» ընկերությունն արդեն սկսել է գործունեությունը Կապանում: Ինչպես տեղեկանում են Լուրդինի ֆոնդային բորսայի լրատվական ծառայությունից, հունվարի 30-ին ավարտին է հասցվել կոմբինատի ձեռքբերման գործընթացը: Ըստ այդմ՝ նոր սեփականատերն ընդունել է կոմբինատի 395.167.015 հատ բաժնետոմսերը, որոնցից յուրաքանչյուրի արժեքը 0,01 դոլար է, այսինքն՝ կոմբինատի կանոնադրական կապիտալը 3,9 մլն դոլար է:

Հիշեցնենք, որ դրա նախկին սեփականատերը ռուսական «Պոլիմետալ Ինթերնեյշնլ» հանքարդյունաբերող ընկերությունն էր, որն անցյալ տարվա հոկտեմբերի 30-ին համաձայնագիր էր կնքել Բրիտանական Վիրջինյան Կղզիներում գրանցված «Չաարատ Գոլդ Դոմեյնս»-ին: Գործարքի գինը 55 միլիոն դոլար է:

Ջերսի կղզում գրանցված ռուսական հանքարդյունաբերողին իր հերթին Կապանի կոմբինատը ձեռք էր բերել կանադական «Դանոն Փրիշս Մեթալ» ընկերությունից 2016-ին: Գործարքի պայմանագրի համա-

ձայն՝ 10 մլն դոլարը կանադացիներին վճարվելու էր գումարով, իսկ 15 մլն-ին համարժեք էլ ռուսական ընկերությունից բաժնետոմս էր տրվելու «Դանոն»-ին, դրան հավելած՝ Կապանի հանքավայրի շահագործումից ստացած 2 տոկոս ռոյալթի, որը չպետք է գերազանցեր 25 մլն դոլարը:

Փետրվարի 6-ին Կապանի համայնքապետ Վորգ Փարսյանը հանդիպել է գրանցված «Չաարատ Գոլդ Դոմեյնս»-ի գլխավոր տնօրեն Արտյոմ Վոլինցի և «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Թադևոսյանի հետ: Այս մասին տեղեկանում ենք համայնքապետարանի կայքից:

Ձրուցակիցները քննարկեցին երկրորդ հարաբերություններին առնչվող հարցեր՝ կարելի էր կապանի հանքային ռեսուրսները հանձնարելու օգտին ևս մեծ ջանքեր ներդրելու, ինչպես նաև կարելի էր փոխադարձ հետաքրքրություններ կապանի հանքային ռեսուրսները ղրկողներին համագործակցության հետագա խորացմանն ու ամրապնդմանն ուղղված համատեղ քայլերի ձեռնարկումը,- ասվում է հաղորդագրության մեջ:

hetq.am

# Ովքե՞ր են ի՞նչ ճանապարհով են 2014-17 թթ. Սյունիքում կատարել սեփականության վերաբաշխում

Վերաբաշխումը կատարվել է բռնագավթան միջոցով: Որպեսզի այդ կասկածները փարատվեն, որպեսզի նոր բաժնետերերը համրության կողմից ընկալվեն իրեն լեգիտիմ սեփականատերեր են արժանանան հանրության հարգանքին ու վստահությանը, անհրաժեշտ է օրենքում ամրագրել հստակ պահանջ՝ ով է ինչ ճանապարհով ու ինչ միջոցներով է դարձել ընդերք օգտագործող ընկերության բաժնետեր (սեփականատեր):

**Հարգելի պատգամավորներ**  
Հազարավոր այլունեցիների անունից պատվիրան ենք հղում ձեզ՝ «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում

փոփոխություններ են լրացումներ կատարելու մասին» օրինագիծը խորհրդարանում քննարկելիս նկատի ունենալ լրջագույն այդ խնդիրը:

**Հակառակ պարագայում, ներող եղեք, կնշանակի, որ դուք նույնպես (ձեր կամքից անկախ) կանաչ ճանապարհ եք բացում Սյունիք ներխուժած գաղութարարների համար եւ չէք պաշտպանում սեփականության անձեռնմխելիությունը մեր երկրամասում, որն ամրագրված է ե՛ւ ՀՀ սահմանադրությամբ, ե՛ւ միջազգային բազմաթիվ փաստաթղթերով:**

**Հարգանքով՝**  
**Սամվել Ալեքսանյան**  
**26 փետրվարի 2019 թ.**

# Հանճարեղ պոեթի մեկուկես դարը

Վերջին փակելու գանգազան դրամբյանների բերանը: Ի՞նչ էր գրում սույն դրամբյանը. «Հայոց «գրական մեծությունները» բանագող են պարապում, ժողովրդական ստեղծագործություններն են առնում ու չնչին փոփոխություններով կամ բառացի հրապարակում իբրև իրենց ինքնուրույն գրվածք»: Թունանյանն իր ընդդիմախոսին սպառնիչ պատասխան է տալիս ռուս գրականության դասական Պուշկինի օրինակով, ով գրական մշակման է ընթացիկում ռուսական ժողովրդական լեգենդներն ու հեքիաթները եւ վերադարձրել իր ժողովրդին, որոնցով ըստ Թունանյանի՝ «գրականության մեջ էր մտնում ռուսաց ժողովրդական ոգին ու շունչը»: «Ով դրամբյան, դուք էնքան տգետ եք, չէք էլ իմանում, որ հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ վերցնում են եւ պատմում: Եվ շնորհքը հենց այդ պատմելու մեջ է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գան, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ գեղեցիկ դուրս գա եւ ժողովրդականի համը ու հոտը չկորցնի»:- «Ոչ գրական ոչնչությունները քննադատ» հոդվածում գրում է Թունանյանը:

Թունանյանի կենսափոխաբանությունն առավել քան խտացված է նրա քառյակներում, որ նա գրել է կյանքի վերջին շրջանում: Դրանցից յուրաքանչյուրի մեջ զգացվում է մտքի եւ խոսքի խորությունը: «Քառյակները հասուն շրջանի արդյունքն են, դրանք իմ հոգու կենսագրությունն են,- ասում է ու հավելում,- բառակցող գոհար է եւ անպայման հղված պիտի լինի: Մարդիկ կան, որ քառյակները ոտանավորի նման են կարդում. պարզ տեսնում են, որ չի հասկանում ինչ բան է քառյակը»:

Բանաստեղծական այդ փոքր ձեռք մեզ Թունանյանն

արտահայտել է մարդկայության, սիրո եւ համերաշխության, կյանքի հավերժության գաղափարներ, խարազանել մարդկային կյանքի խոտելի կողմերը, ահավասիկ երկու շիրիմ իրար կից, Հավերժական լուռ դրկից, Թախծում են պաղ ու խորհում, Թե՛ ինչ տարան աշխարհից:

Նրա գրական ստեղծագործություններում, հրապարակախոսական հոդվածներում արժարժված գաղափարները, չխուսափենք այդ բառից, խրատները, այժմեական են մեր օրերում, քանզի աշխարհն այսօր նույնքան հեռու է կատարյալ լինելուց, որքան Թունանյանի ժամանակներում: Արդ, ո՞րն է դժվարը ըստ Թունանյանի. «Աշխարհում ամեն բան հեշտ է, մի բան է դժվար՝ մարդ լինելը... Հեշտ բան հո չէ՞ մարդ լինելը»:

Թունանյանը բեֆ սիրող մարդ էր, եւ մտերիմների կողմից ստացել էր եւս մի կոչում՝ «Ամենայն հայոց թամարա»:

Արդեն մի քանի տարի Հովհաննես Թունանյանի ծննդյան օրը հռչակվել է գիրք նվիրելու օր, չէ՞ որ մեզանից շատերը գրքի հետ ծանոթացել են թունանյանական հեքիաթներով ու մանկական բանաստեղծություններով: Ռուս գրող Կորնեյ Չուկովսկին հենց միայն Թունանյանի՝ մանուկների համար գրված ստեղծագործությունները նկատի առնելով գրել է. «Նրան, ով գրել է «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն», «Մուկիկի մահը», իրոք որ չի կարելի համաշխարհային արվեստի առաջնակարգ վարպետների շարքը չդասել»:

Դե իսկ հրեյականական ու հիշարժան օրը Թունանյան պոետի բանաստեղծական աշխարհին հաղորդակցվելու մի պատեհ առիթ էր...

Վահրամ Օրբեյան

# Անձնական ռեկորդով դարձավ հաղթող

Կապանցի եռացատկորդ, Ռիո-2016 օլիմպիական խաղերի մասնակից Լեւոն Աղասյանը երրորդ տարին անընդմեջ նվաճել է Բալկանյան խաղերի ձմեռային առաջնության եռացատկի չեմպիոնի տիտղոսը: Փետրվարի 16-ին Ստամբուլում կայացած Բալկանյան խաղերի 24-րդ ձմեռային առաջնության մրցաշարում 24-ամյա հեռացատկորդը հաղթել է 16 մ 71 սմ արդյունքով՝ իր հետեւում թողնելով արդթեշանցի եւ թուրք մարզիկներին եւ սահմանելով անձնական ռեկորդ: Աթլետիկայի ազգային հավաքականի կազմում ընդգրկված էին կապանցիներ Արամայիս Սարգսյանը, Մարիետա Միցասյանը:

Ինչպես «Սյունյաց երկրին» փոխանցեց Կապանի համայնքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Արշամ Սարգսյանը, ով Թուրքիայում վերոհիշյալ մրցմանը մասնակցող պատանիների պատվիրակության ղեկավարն էր, Լեւոն

Աղասյանը մինչեւ փետրվարի 27-ը ուսումնամարզական հավաք կանցկացնի Ստամբուլում՝ պատրաստվելով Եվրոպայի ձմեռային առաջնությանը, որ տեղի է ունենալու շտալանդական Գլազգո քաղաքում մարտի 1-ից 3-ը: Հայաստանի ընտրանին այս պատասխանատու մրցմանը կմասնակցի երեք մարզիկով: Ստամբուլում ցույց տված արդյունքը կրկնելու դեպքում Եվրոպայի առաջիկա առաջնությունում Լեւոնը, անկասկած տեղ, կգրավի առաջատարների թվում:

Ավելի վաղ փետրվարի 10-ին Ստամբուլում տեղի ունեցավ պատանիների ձմեռային երրորդ առաջնությունը, որին մասնակցեցին կապանցիներ Գոռ Բեգլարյանը եւ Մելինե Աղամյանը: Ի դեպ, Գոռ Բեգլարյանի, Մելինե Աղամյանի եւ հավաքականի պաշտոնական ներկայացուցիչ Արշամ Սարգսյանի մասնակցությունը հովանավորել էր Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, ինչի համար նրանք



հայտնում են իրենց երախտագիտությունը: Ուսումնամարզական հավաքի շրջանակում գտնվելով Ստամբուլում՝ Լեւոն Աղասյանը մասնակցեց եւս մի մրցման՝ Ռուսի Սարիալփի անվան 5-րդ ձմեռային առաջնությանը: Ուշագրավ է, որ Լեւոնը ոչ միայն հաղթող դարձավ, այլեւ բարելավեց իր անձնական ռեկորդը՝ եռացատկում ցույց տալով 16մ 79սմ արդյունք:

Վահրամ Օրբեյան

## Մրցույթի ծածկագիրը LSDP-2019/015

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության ֆինանսավորմամբ իրականացնում է «Անասնապահության զարգացումը Հայաստանի հարավում» ծրագիրը, որի շրջանակներում՝ Սյունիքի եւ Վայոց Չորի մարզերի համայնքային արտոների հասնելիության մեծացման նպատակով ենթակառուցվածքների (ջրելատեղի, արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ, բաց կամ ծածկով մակատեղ, հովվի կայարան, ոչխարի լողարան) նախագծամատչանաշխարհային աշխատանքների իրականացման նպատակով հայտարարում է մրցույթ:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ձեռք բերվող ծառայությունները ազատված են ավելացված արժե-

քի հարկից և ՉՆԵ կողմից ներկայացված գները չպետք է ներառեն ԱԱՀ:

Մրցույթին մասնակցելու ցանկացող կազմակերպությունները հայտերը պետք է ներկայացնեն «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ գրասենյակ՝ ք. Երեւան, Այգեստան 5-րդ փողոց, 3/1 տուն հասցեով՝ մինչեւ 2019թ. մարտի 05-ը ժամը 19:00: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար զանգահարել հեռ՝ (091523679)

Էլ.փոստ: n.aleqsanyan@sdaoffice.com կամ sdaoffice@sdaoffice.com  
«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ Գործիչի գրասենյակ՝ ք. Գորիս, Արեգունի 84 հասցեով՝ մինչեւ 2019 թ. մարտի 05-ը ժամը 19:00: Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար զանգահարել հեռ՝ (093-02-55-56) Էլ.փոստ: a.avanasyan@sdagoris.com

# Սյունյաց երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆՓՈՎԱ ՊԱՏԱՍԽԱՄԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Ռեզանցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶՂ - ՕԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1150, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.02.2019թ.: